

ՆԱԽԱԳԱՆ ԱՍՏՆ ԸՆԴՈՒՆԵՅՑ ԱՆՃԵՐԻՈՅ ԵՒ ԱՐԽԱԶԻՈՅ ԴԵՄՊԱՆՆԵՐՈՒ ՀԱԲՏԱՐՄԱԳԻՐՆԵՐԸ

Զորեքշաբթի, 29 Յուլիս, 2020-ին Սուրիոյ Նախագահ Պաշարալ Ասատ ընդունեց Հասան Թուհամիի հաւատարմագիրները, որպէս Ալճերիոյ Ժողովրդավարական Հանրապետութեան դեսպան, ինչպէս նաեւ Խոթապա Պակարոյ Ռաշոփիին՝ որպէս Աբխազիոյ Հանրապետութեան դեսպան: Նախագահ Ասատ ընդունեց դեսպանները եւ իրենց ստանձնած Նոր պաշտօնին համար յաջողութիւն մաղթեց: Ընդունելութեան ներկայ էին նաեւ Սուրիոյ արտաքին գործոց Նախարար Ուալիտ Մուալլեմ եւ Սուրիոյ Հանրապետութեան Նախագահութեան հարցերու պետական Նախարար Մանսուր Ազգամ:



Չորեքշաբթի, 30 Յուլիս 2020-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը հրապարակեց 2019-2020 ուսումնական տարեշրջանի երկրորդականի՝ պաքալորիայի պետական քննութիւններուն արդիւնքները: Սուրիոյ Կրթութեան Նախարար Իմատ Ազպ այս առիթով մամլոյ ասուլիս մը տուաւ յայտնելով, որ գիտական բաժնի յաջողութեան տոկոսն է 71,78 %, իսկ գրական բաժնինը՝ 60,21 %: Ազպ աւելցուց, որ գիտական բաժնին 6 աշակերտներ լրիւ գնահատանի չէր արժանանալով 2900/2900, երկու աշակերտներ՝ 2899/2900, իսկ 4 աշակերտներ՝ 2898/2900:

ՍՈՒՐԻՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱՎԵՅ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Չորեքշաբթի, 30 Յուլիս 2020-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը հրապարակեց 2019-2020 ուսումնական տարեշրջանի երկրորդականի՝ պաքալորիայի պետական քննութիւններուն արդիւնքները: Սուրիոյ Կրթութեան Նախարար Իմատ Ազպ այս առիթով մամլոյ ասուլիս մը տուաւ յայտնելով, որ գիտական բաժնի յաջողութեան տոկոսն է 71,78 %, իսկ գրական բաժնինը՝ 60,21 %: Ազպ աւելցուց, որ գիտական բաժնին 6 աշակերտներ լրիւ գնահատանի չէր արժանանալով 2900/2900, երկու աշակերտներ՝ 2899/2900, իսկ 4 աշակերտներ՝ 2898/2900:



ՅԱԿՈՐ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. «ԳԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՅԱՐՉԱԿ ԱՐԺԷ ԵՆ»

ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ, Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդի Նախագահ Յակոբ Տեր Խաչատուրեան հարցազրոյց տուած է Հայաստանի Հանրային պատկերասփիւռի կայանի «Հարցազրոյց» հաղորդաշարին: ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը անդրադարձած է 12 Յուլիսին հայ-ատրպէյճանական սահմանի Տաւուշի հատուածին մէջ իրավիճակի սրման եւ այդ գծով ՀՀ Բիւրոյի կառոյցներուն ու Հայ Դատի գրասենեակներուն ձեռնարկած քայլերուն:



«Տաւուշեան դէպքերն ենք Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, բնականաբար, ձեռնարկեց անմիջական աշխատանքներու, նախ՝ քարոզչական մարզին մէջ: Մեր գրասենեակներն ու յանձնախումբերը անցան գրոհի՝ դիմագրաւելու համար թուրքիոյ եւ Ատրպէյճանի հակահայ քարոզչական արշաւը, ինչպէս նաեւ իրականութիւնը ներկայացնելու եւ օժանդակելու Հայաստանի արտաքին դիւանագիտութեան», հաստատած է ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը:

ԱԶԳԱՅԻՆ ԸՄՐԷՆ ԵԾՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ «Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ» ԸՐԶԱՆԱԽԱՐՏ ՀՈՒՆՁՔԻՆ ՀԱՆԴԵՍԸ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի, կազմակերպութեամբ Ճեմարանի Խնամակալութեան եւ Տնօրէնութեան, Ուրբաթ, 24 Յուլիս 2020-ին երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի երկրորդականի շրջանաւարտ հունձքին ամավերջի հանդէսը:

Հունձքը կոչուեցաւ «Յ. Թումանեան» սերունդ: Հանդէսի գեղարուեստական յայտագիրը Նուրիուած Էր Ամենայն Հայոց Բանաստեղծին գործին, գրական վաստակին ու կեանքին:

Հանդէսի բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի հանրապետութիւններու զոյգ քայլերգներով:



Հայերէն բացման խօսք արտասանեց շրջանաւարտ Նանար Շահինեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, վեր առաւ ծնողներուն գոհողութեան ոգին ու Յ. Թումանեան սերունդին անուսով յայտնեց. «Երախտագիտական ջերմ գագացումներով այսօր հրաժեշտ կու տանք այս կառոյցին, որ կոչեց ու մշակեց մեր մտքերն ու հոգիները, Յ. Թումանեանի «Կաթիլ Մը Մեղր»-ին պէս կաթիլ առ կաթիլ ազգային ու մարդկային արժէքներ սրկեց մեր մէջ»:

Արաբերէն բացման խօսքով հանդէս եկաւ շրջանաւարտ Մարալ Ղազելեան, յայտնելով որ «Ճեմարանի երկու շէնքերը ամենտարի ակնաստես կ'ըլլան իրենց յարկերուն տակ թրծուող աւարտական հունձքի մը աւարտական հանդէսին: Հունձք մը, որ շրջանաւարտ դառնալով ու իր ապագան կերտելով կ'արժեւորէ վարժարանին առաքելութիւնը՝ հպարտութիւն առնելով իր ծնողին, դպրոցին ու հայրենիքին»:

Հայերէն ուղերձով հանդէս եկաւ շրջանաւարտ Սեսիլ Պազարպաշեան, որ իր սերունդին անուսով երախտագիտութիւն յայտնեց ճեմարանին, շնորհակալութիւն յայտնեց վարժարանի ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան, ապա եզրափակելով ըսաւ. «Յետուիսին ճեմարան, տաճար գահափարակաւ: Բու յարկին ներքեւ մենք գիտուեցանք հայեցի ու ազգային դաստիարակութեամբ»:

Արաբերէն ուղերձով Սիրվի Յովակիմեան դիտել տուաւ, որ «դպրոցը փոքրիկ հայրենիք մը եղաւ մեզի համար: Ան գիտութեան լոյսով ու սիրով պատսպարեց մեզ պատերազ մի ծանր տարիներուն: Մենք, մեր կարգին, թէեւ տարիներ հեռու մնացինք մեր դպրոցին կառոյցէն, սակայն Նոյն ոգիով շարունակեցինք մեր ուսումը եւ վերադարձանք շնորհիւ սուրիական բանակին արձանագրած յաղթանակներուն: Այսօր հպարտ ենք մեր ձեռքբերումներով եւ շնորհակալ ենք մեր սիրելի վարժարանէն»:

Գեղարուեստական յայտագիրով շրջանաւարտները ասմունքեցին Թումանեանի բանաստեղծութիւններէն փունջ մը, շնորհալի այլ շրջանաւարտներ հայկական պարով գարդարեցին բեմը, իսկ երաժշտաւոր շրջանաւարտներ իրենց հաճելի կատարումներով Նրբաճաշակ երաժշտական յայտագիր մը հրամցուցին:

Այնուհետեւ վարժարանի պետական տնօրէնը իր սրտի խօսքը արտա-

Թղթակից
 Շաբ.՝ 12 12

Խմբագրական

ՅԱՐԳԱՆՔ ՇՐՋԱՆԱԿԱՐՑ ԱՅՍ ՍԵՐՈՒՆԴԻՆ

2019-2020 ուսումնական տարեշրջանը սուրիահայ վարժարաններուն համար դժուարություններով լեցուն շրջան մը եղաւ:

Պատերազմէն տակաւ դուրս եկող Սուրիոյ մէջ, իւրաքանչիւր վարժարան սկսած էր արդէն վերականգնումի իր աշխատանքներով աստիճանաբար ուղի կանգնիլ, ունենալով մէկտեղ ուսուցչական մարդուժի, տնտեսական, աշակերտներու թիւի նուազումի եւ այլ հարցեր:

Միւս կողմէ պատանի եւ երիտասարդ սերունդներուն դիմագրաւած դժուարությունները մանկավարժական հարցերու լուծման, աշակերտները խրախուսելու եւ ուսման ու գիտութեան մղելու այլ մարտահրաւերի մը դիմաց կը դնէին վարժարաններու տնօրէններն ու ուսուցչական-վարչական պատասխանատուները:

Մարտի սկիզբը վրայ հասաւ նաեւ պսակածէ ժահրին համաճարակը: Վարժարանները փակուեցան: Իւրաքանչիւր վարժարան իր կարելիութեան սահմաններուն մէջ փորձեց ուսումնական ծրագիրը լրումին հասցնելու լուծումներ որոնել՝ հետեւելով Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան որոշումներուն:

Ուսումնական ծրագիրները կրճատուեցան, որոշ տեղեր առցանց կիրարկուեցան: Ուսումնական տարին հասաւ իր աւարտին՝ պսակածէ ժահրի դիմագրաւման նախագուշակական միջոցներու որդեգրումով:

Հիմնական մտահոգությունը կը վերաբերէր պետական քննութիւն յանձնող կարգերուն: Բարեբախտաբար անոնք եւս յաղթահարեցին այս դժուարությունները՝ շնորհիւ նախարարութեան ընձեռած կարելիություններուն՝ ծրագիրներու կրճատում, քննութեանց յետաձգում, յաջողութեան պայմաններու բարեփոխում, վերաքննութեան առիթ եւ այլն:

Կարելի է ըսել, որ նախարարութիւնը բաւական դիւրութիւններ ընծայեց աշակերտներուն՝ մղելով որ լաւապէս պատրաստուին պետական քննութիւններուն եւ իրենց առաւելագոյնը ի գործ դնեն յաջողութեամբ աւարտելու տարին:

Ամավերջի հանդէսները որոշակի սահմանափակումներով կազմակերպուեցան եւ մեր բոլոր վարժարանները յաջողեցան զօրակցիլ հայ աշակերտներուն՝ զանոնք տեսնելու ուսումնական լաւ մակարդակի վրայ:

Երկրորդականի պետական քննութիւններուն արդիւնքները յաջողութեան լաւ տոկոսի մը արգասիքն էին փաստօրէն:

Մեր ժրաջան սերունդները, տարբեր վարժարաններու մէջ, տքնեցան ու գնահատելի արդիւնքներով աւարտեցին հայկական երկրորդական վարժարանները: Անոնք զրկուած ըլլալով բնական պայմաններու մէջ սորվելու եւ ուսումնական բարուք տարի մը վայելելու կարելիություններէ, արժանացան համալսարան մուտքի գնահատանիշներուն՝ յոյսի հորիզոններ բանալով մեր բոլորին դիմաց:

Կը շնորհաւորենք հայկական մեր բոլոր վարժարաններուն շրջանաւարտները եւ կը մաղթենք, որ շարունակեն իրենց յամառ աշխատանքը՝ բարձրագոյն ուսման արժանանալու եւ իրենց պայծառ ապագան ուրուագծելու:

Կարելի բոլոր միջոցներով նեցուկ կանգնիք այս սերունդին, որ քաջութիւնն ու ինքնավստահութիւնը ունեցաւ յաղթահարելու բազում դժուարություններ ու զրկանքներ կրելով արժանացաւ հայկական վարժարաններէն վկայուելու պատիւին:

Բարի երթ բոլորին:

«Գ.»

-Չորեքշաբթի, 29 Յուլիս 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ պսակածէ ժահրով վարակուած 23 պարագաներ արձանագրուեցան եւ 9 պարագաներ բուժուեցան:

Մահացած	Բուժուած	Վարակուած
40	229	717

Այսպիսով Սուրիոյ մէջ պսակածէ ժահրով վարակուածներուն թիւը կը հասնի 717-ի, մահացածներունը՝ 40-ի, իսկ բուժուածներունը՝ 229-ի:

-Թրքական ուժեր կը շարունակեն խախտել միջազգային օրէնքներն ու համաձայնութիւնները՝ այս անգամ Եփրատ գետին Սուրիոյ տրամադրուած ջուրը անջատելով եւ ելեկտրական ջերմութի քանակը տկարացնելով: Այս պատճառով Եփրատի ելեկտրակայանին արտադրութիւնը նուազած է՝ իջնելով քառորդի:



Սուրիոյ Նահանգներուն մեծամասնութիւնը, Ներառեալ Յալէպ, կ'օգտուի Եփրատի ելեկտրածին կայանէն: Յետեւաբար Թուրքիոյ Եփրատի ջուրերու հասանելիութիւնը արգիլելուն հետեւանքով, 3 ամբարտակներ, որոնք ջուր կը մատակարարեն Յալէպին, դադրած են գործել:

Թրքական այս թշնամական եւ անմարդկային արարքին ի հետեւանք Եփրատի ափին գտնուող սուրիական կարգ մը քաղաքներ ջուրի չգոյութեամբ կը տառապին:

Ըստ մասնագետներու, Եփրատի ամբարտակը կ'արտադրէր 800 մէկաուաթ ելեկտրականութիւն ժամական դրութեամբ, սակայն ներկայիս ան յիշեալ քանակին մէկ քառորդը կ'արտադրէ, ջուրի մակարդակի նուազումին պատճառով:

Եփրատի ամբարտակի վերակացուններէն երկրաչափ. Ուաէլ Ռաուի յայտնեց, որ Եփրատի ջուրի մակարդակի նուազումին պատճառով ոչ միայն ջուրի տագնապ պիտի յառաջանայ, այլ նաեւ ելեկտրականութեան:

Մասնագետներու համաձայն, եթէ Թուրքիան շարունակէ իր այս անմարդկային արարքը, այդ պարագային Յալէպ, Ռաքքա, Տեր Չօր, Պուքամալ եւ Իրաք աղետալի իրավիճակի մէջ պիտի յայտնուին:

-Կիրակի, 27 Յուլիս 2020-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը պաշտօնապէս յայտարարեց, որ 2020-2021 ուսումնական տարեշրջանը պիտի սկսի Երեքշաբթի, 1 Սեպտեմբեր 2020-ին, իսկ վարչական պաշտօնեաններուն, ուսուցիչներուն եւ տնօրէններուն աշխատանքը պիտի սկսի յառաջիկայ 25 Օգոստոս 2020-ին:



- Չորեքշաբթի, 29 Յուլիս 2020-ին, «Շամ Թայմզ» հաղորդեց, որ համալսարանական կայքեր ուսումնասիրող «webometrics» կայքը 2020-ի համալսարաններու կարգերու դասաւորման ցանկը հրապարակած է, նկատի ունենալով իւրաքանչիւր համալսարանի կամ հիմնարկի կայքին աշխուժութեան եւ «Google Scholar»-ի մէջ իրենց ունեցած ուսումնասիրութիւններուն մակարդակին: Տեղական համալսարաններու մակարդակով Դամասկոսի Պետական Յամալսարանը գրաւած է առաջին դիրքը, երկրորդ դիրքը՝ Յալէպի Պետական Յամալսարանը, երրորդը՝ Կիրարական եւ Գիտարուեստի Գիտություններու Բարձրագոյն Հիմնարկը: Յամալսարանային մակարդակով յիշեալ հաստատությունները կը գրաւէին 10.000-րդ կարգէն նուազ դիրքեր, իսկ արաբական երկիրներու մակարդակով 1217 համալսարաններու մէջ Դամասկոսի Պետական Յամալսարանը գրաւեց 130-րդ դիրքը, 1 տարուան մէջ գերազանցելով 34, իսկ 2 տարուան մէջ 980 համալսարանի:



ՍՈՒՐԻՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՊԱՔԱՆՈՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը Հինգշաբթի 30 Յուլիս 2020-ի առաւօտեան հրապարակեց 2019-2020 ուսումնական տարեշրջանի երկրորդականի աւարտական կարգի՝ պաքալորիայի պետական քննութիւններուն արդիւնքները:

Նախարարութեան համաձայն, գիտական բաժինէն Սուրիոյ բոլոր նահանգներէն քննութեան ներկայացած է 124.813 աշակերտ-աշակերտուհի, յաջողած՝ 89.595 աշակերտ-աշակերտուհի, հետեւաբար գիտական բաժինի յաջողութեան տոկոսը եղած է 71,78 առ հարիւր (նախորդ տարուընէ 3,92 առ հարիւրէ աւելի): Գրական բաժինէն քննութեան ներկայացած է 76.003 աշակերտ-աշակերտուհի, յաջողած՝ 45.758 աշակերտ-աշակերտուհի, 60,21 առ հարիւր յաջողութեան տոկոսով:

Նախարար Ազգ յաջողութեան համեմատութիւնը բաղդատելով նախորդ տարուան հետ, անդրադարձաւ թէ Գորոնայ ժահրին պատճառով եւ դասաւանդման դադրեցումով, աշակերտները կրկնակի աշխատանք թափեցին օգտուելով կրթական նախարարութեան առցանց կայքէջերուն մատուցած ծառայութիւններէն:

Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարան

Գիտական Բաժին	Արմէն Զատտատ	1957
Մասնակցողներու թիւ՝ 27	Փաթիլ Մուրաֆեան	1945
Ցաջողածներու թիւ՝ 21	Ճորճ Անթոնի Շամոյեան	1786
Ցաջողութեան տոկոս՝ 77.77%	Ալպեր Գասպարեան	1504
Սիրվարդ Յովակիմեան	2641	
Սագօ Պալապանեան	2635	
Սեպիլ Պազարպաշեան	2635	
Նանար Շահինեան	2494	
Անիա Աւետիսեան	2480	
Մեղեղի Աւագեան	2377	
Ճորճ Ոսկերիչեան	2339	
Մեղեղի Գասպարեան	2332	
Քրիստ Էլէճեան	2270	
Ակապէ Ֆրանքեան	2250	
Յովսէփ Տիշոյեան	2249	
Վարդի Փարլաքեան	2136	
Վանի Կրէյս Յովհաննէսեան	2086	
Յովհաննէս Գըլգի	2034	
Անի Պոլիկեան	2022	
Շողեր Սիմոնեան	1984	
Կարօ Սիմոնեան	1959	
Գրական Բաժին		
Մասնակցողներու թիւ՝ 12		
Ցաջողածներու թիւ՝ 11		
Ցաջողութեան տոկոս՝ 91.66%		
Մարալ Ղազէլեան	2559	
Աննա Եղիաեան	2472	
Աննա Մարիա Պիտուզեան	2132	
Անի Արթինեան	2076	
Յակոբ Գանտարեան	2038	
Լիւսի Դարբինեան	2003	
Արրահամ Օրուլեան	1906	
Ժէնի Փիլաւճեան	1844	
Քարէն Թանաշեան	1815	
Մեղրիկ Սեմերճեան	1809	
Սօսի Մանսուրեան	1585	

Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ Վարժարան

Գիտական Բաժին	Սթելլա Ֆրիք	2005
Մասնակցողներու թիւ՝ 58	Մայա Ֆրէժ	1958
Ցաջողածներու թիւ՝ 53	Միրելլա Զատտատ	1944
Ցաջողութեան տոկոս՝ 91.37%	Անժելլա Զուսան	1928
Ժողոս Փայապլեան	1914	
Ֆետի Իսա	1896	
Ռոզալի Օբզան	1833	
Փերլա Թումա	1778	
Մեղրի Խաչօ	1771	
Զապիպ Ուրֆալի	1728	
Լիլա Աթաշեան	1717	
Նայա Զոնամախուլ	1620	
Ժուլի Զատտատ	1521	
Ռուպա Իպրահիմ	1493	
Ժուլի Ղազի	1457	
Ալիսիա Լախոյեան	1372	
Գրական Բաժին		
Մասնակցողներու թիւ՝ 19		
Ցաջողածներու թիւ՝ 19		
Ցաջողութեան տոկոս՝ 100%		
Ժէնի Չիլ Գեորգեան	2349	
Լալա Տապապաշեան	2317	
Անժելլա Բելլեան	2300	
Սանտրա Մարճամաք	2271	
Մայա Գահաուաթի	2139	
Օտեսսա Ապտ Ալքարիմ	2125	
Չարուհի Աւագեան	2101	
Միրիամ Մուրատ	2074	
Վանի Արքարեան	2062	
Ապուտ Բալաշ	2008	
Մակի Սըրգ	2007	
Քրիսթին Յակոբ	1994	
Գառնի Խաչատուրեան	1876	
Էլի Պաղտի	1758	
Սամեր Ճրճոս	1650	
Անթուան Թահան	1552	
Սալիմ Զաննա	1435	
Ռուլանտ Մագտիս Աֆրիմ	1427	
Գեորգ Տօնիկեան	1391	
Ժողէֆ Զաննա	2795	
Յակոբ Գասարեան	2787	
Ռոյ Պապիք	2753	
Ճորճ Իպրահիմ	2749	
Նուր Ալգարիֆ	2737	
Զապիպ Ֆաթքճի	2694	
Եուսէֆ Խարպուք	2690	
Էլսի Ռաթոմ	2675	
Սուրեն Թամեր	2649	
Ճորճ Պրճի	2469	
Նիզոլա Շաքքուր	2648	
Ֆետի Խէչօ	2646	
Ժուլիան Պապիք	2642	
Միրիամ Չալէմ	2618	
Քարին Նգէյթ	2597	
Զիքմաթ Ալպր	2587	
Մայքլ Մրճանէ	2584	
Ալեքսանտրա Աշնագլեան	2582	
Իլիաս Տողանճի	2582	
Փաթիլ Բէչեճեան	2515	
Գարլոս Մագտիսի	2514	
Նուրա Տաուտաք	2457	
Ապտ Ալ Նուր Ուասսուֆ	2438	
Տիգրան Չէյթեան	2428	
Իլիաս Խաուամ	2427	
Լին Բնիուշ	2377	
Զապիպ Գազանճի	2310	
Ժանէթ Մասրիէ	2257	
Գարօլին Նազարեան	2230	
Սեպուհ Կիլաղայեան	2180	
Մէյրի Ֆազգաս	2170	
Նատա Նահասնէ	2164	
Մունա Ֆաթքճի	2155	
Իլիաս Չահրա	2153	
Մարնի Զաննա	2127	
Ժուլի Թալպա	2080	
Նայա Սապաղ	2037	

Լ.Նաճարեան-Գ.Կիւլպէնկեան Կեդրոնական Վարժարան

Գիտական Բաժին	Անդրանիկ Սեմերճեան	2477
Մասնակցողներու թիւ՝ 25	Աննա Տալիտա Չափանեան	2476
Ցաջողածներու թիւ՝ 24	Յակոբ Ճագօ	2459
Ցաջողութեան տոկոս՝ 96%	Միլաս Թաշճեան	2438
Քապի Շէյխօ	2813	
Աննա Մարիա Պարսումեան	2798	
Գրիգոր Թէնքեճեան	2744	
Զրաչ Կարապետեան	2716	
Քարլա Ալ Նահի	2644	
Անժելլա Բարքուրեան	2631	
Սարգիս Տէրեճեան	2630	
Մարիա Շող Փամպուրեան	2580	
Փաթիլ Բասսիս	2542	
Անդրանիկ Սեմերճեան	2477	
Աննա Տալիտա Չափանեան	2476	
Յակոբ Ճագօ	2459	
Միլաս Թաշճեան	2438	
Սարին Գասպար	2397	
Լարա Էօրտեքեան	2349	
Արրահամ Բատահ	2250	
Պերնարտ Զաթիպեան	1911	
Լալա Պետրոսեան	1889	
Սթէֆ Բէշիշեան	1856	
Ալեքս Տէմիրճեան	1709	
Մեղեղի Փամպուրեան	1699	
Գարլա Փանոսեան	1618	
Իգապէլ Յովհաննէս	1578	
Էսթելլա Կիլտալեան	1386	


Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական Վարժարան

Գիտական Բաժին	Սալի Մալալեան	2634
Մասնակցողներու թիւ՝ 17	Ֆարիտ Տիպ	2630
Ցաջողածներու թիւ՝ 17	Ճոնի Անտրաուս	2413
Ցաջողութեան տոկոս՝ 100%	Ռիման Շաապօ Մարտլի	2333
Ճորճ Մուրաֆեան	2333	
Քրիսթինա Պիթար	2308	
Նորա Թումա	2299	
Յակոբ Գապայեան	2190	
Նայա Ասաստ	2141	
Ճորճ Պալուզիէ	1959	
Յովհաննէս Գեորգ	1861	
Շահտ Տիպէ	2856	
Սարա Ալշանասա	2831	
Եուսէֆ Պսէլիս	2796	
Անթոնիօ Զոմի	2787	
Շամիրամ Արուշ	2675	
Ռըզք Ալլահ Արնուք	2778	

Կիլիկեան Ճեմարան

Գիտական Բաժին	Ճորճ Սայել	2200
Մասնակցողներու թիւ՝ 9	Ճորճ Մգահիէլ	1983
Ցաջողութեան թիւ՝ 7	Արրահամ Չատիկեան	1986
Ցաջողութեան տոկոս՝ 77.77	Նուր Շալաշ	1895
Քրիստ Չատիկեան	2602	
Ճորճ Սայել	2200	
Ճորճ Մգահիէլ	1983	
Արրահամ Չատիկեան	1986	
Նուր Շալաշ	1895	
Գարլօ Կարապետեան	1853	
Նանար Բարսեղեան	1539	

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐԷՆ ՄԷԿԸ



Վիգեն Գեյրոպետյան

Երկար ժամանակ է վեր կը տատանվի յոդուածի մը վերնագրի ընտրութեան գծով, մտքիս մէջ ուրուագծուած շարք մը դէպքերու շուրջ, որոնք փորագրուած են յիշողութեանս մէջ:

Չեմ գիտեր ինչպէս պահ մը, ներքին մղում մը զիս փոխադրեց դպրոցական տարիներու նստարանները:

Ութերորդ դասարանի աշակերտ էի, երբ հայերէնի ուսուցչուհիս բացատրեց շարադրութիւն գրելու տարրական ձեւերը, յայտնելով որ ան միտք մը արտայայտելու եւ տե-



սակետ պարզելու միջոց է առհասարակ նկար մը շուրջ: Ապա ան պարտականութիւն տուաւ նկարագրելու դպրոցական մեր առօրեայէն օր մը:

Հակառակ անոր որ միջակ մակարդակի աշակերտ մըն էի, դասերուս ժամանակ տրամադրելու իմաստով, այդուհանդերձ մեծ հետաքրքրութիւն ունէի հայ լեզուին նկատմամբ:

Յաջորդ հայերէնի դասապահուն, հակառակ որ ուսուցչուհիս շատ բան չէր գիտեր հետաքրքրութեանս մասին, պատահաբար զիս հրաւիրեց ամպիոն՝ կարդալու շարադրութիւնս: Երգծական ոճով մը ներկայացուցած էի դպրոցական օրուան եօթը պահերը, լուսարձակի տակ առնելով ուսուցիչներուն բացթողումները, աշակերտներուն ընդհանրապէս ուսուցիչին չհամակերպելու ու ծաղրելու տղայական չարածիւրութիւնները եւ այլն: Շարադրութեանս ընթացումը անարտելիս ետք, ինծի համար անակնկալ պատասխան մը ստացայ ուսուցչուհիէս: Ան չհաւատաց որ ես գրած եմ շարադրութիւնը եւ դժբախտաբար առանց նոյնիսկ հարցնելու, թէ մէկը օգնած է ինծի, հաստատեց որ ծնողքս գրած է:

Իրականութեան մէջ երկար ատեն չկրցայ ներել ուսուցչուհիիս այդ անխիճ մօտեցումը:

Յաջորդ տարեշրջանին, կարծեք «չար» կատակ մը ըլլար, դարձեալ դասարանի ամպիոն ներկայացած էի ընթերցելու ինծի թելադրուած շարադրութիւնը՝ «Նկարագրե՛ Յայրենիքը» վերնագրով, ու ես թռիչք առած դէպի հայրենի աշխարհի նկարագրած էի ինչ որ կը խայտար երիտասարդական տարիներու տեսիլքիս մէջ: Աւարտին կը սպասէի ուսուցիչիս՝ պրն. Յակոբ Չոլաքեանի մեկնաբանութեան:

Ան դառնալով դասընկերներուս հետեւեալը ըսաւ. «Սիրելիներ, իւ-

րաքանչիւրս երբ նիւթի մը մասին գրենք, բնականաբար ազդուած կ'ըլլանք կարգ մը միտքերէ կամ անձերէ, կ'ընդօրինակենք զանոնք: Ձեր դասընկերը, սակայն, ընդօրինակութիւն չէ կատարած, այլ իր ոճով փորձած է ներկայացնել իր մտքերն ու ապրումները»:

Այդ օրուընէ անքակտելի կապ մը ստեղծուեցաւ իմ եւ հայերէնի ուսուցիչիս միջեւ: Օր մըն ալ աննկատեց, որ հայերէնի դասագիրքս կազմարարի տուած էի, ներացած հարցուց. «Տղա՛ս, աններելի սխալ մը գործած ես: Դասագիրքը տարի մը ամբողջ կ'ընթերցեն, կ'իրացնեն անոր բովանդակութիւնը, թող այս դասագիրքի էջերը փտին ձեռքերուդ մէջ»: Ապա զայրացած յայտարարեց. «Հայ գիրքը չէն վերակազմեր, այլ կը մաշեցնեն»:

Ուրիշ առիթով մը նստարանս բաժնեկցող դասընկերս, երբ հարցումով մը ուզեց ուշադրութիւնս շեղել, ուսուցիչս զայրոյթով, ակռաները սեղմած, խեղդուկ ձայնով մը ըսաւ. «Լաւ լսէ՛ ինչ կ'ըսեմ, ես ուսուցիչը ըլլալով քեզի հանդէպ յարգանք ունիմ: Մի ստիպեր, որ այդ յարգանքը չքանայ»:

Դաստիարակի մը նման վերաբերմունքը, բնականաբար, աշակերտին նկարագիրը կերտելու պիտի ծառայէր: Դրն. Չոլաքեան այլ առիթով մը, երբ տեղեկացաւ, որ դասընկերներս մէկը դասի պահուն դպրոցի բակը կողովագնդակ կը խաղար, զուսպ արտայայտութեամբ մը պատուիրեց, որ համոզեմ դասընկերս ու միասին դասարան վերադառնանք: Այդպէս ալ ըրի:

Միջնակարգի դպրոցական տարիներս անարտած էին: Այս քաղցրահամ, անկրկնելի օրերը յիշողութեանս մէջ դրոշմուեցան: Պարոն Չոլաքեանն ու ես թաղեցիներ էինք:

Օրին մէկը, Ազգային Զբարէն Եփփէ ճեմարանի պողոտան հանդիպեցանք: Դպրոցական վերամուտի շրջանն էր: Ուրախութեամբ բարեւեցի ուսուցիչիս: Ան ալ անտեց, թէ զիս պիտի ներանէ մեր վարժարանի աշակերտական «Ծիւեր» պարբերաթերթի խմբագրական կազմին մէջ:


Բնականաբար ուրախութիւն էր լսել ուսուցիչիս այդ հրաւերը, սակայն պրն. Չոլաքեան չկրցաւ պահել իր զայրոյթը, երբ հաստատ եւ համարձակ կերպով յայտնեցի իրեն, որ պիտի չկարենամ ուսումս շարունակել՝ ընտանիքիս տնտեսական վիճակէն մեկնած: Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, որ հօրս հետ մեր ապագայ գործատեղին պահելու սիրոյն պէտք էր կիսատ թողել ուսումս ու հօրս կողքը ըլլալի տեսաբար:

Իրականութեան մէջ, յաճախ շատ մը երագներ կամ ծրագիրներ կրնանք հիւսել, սակայն կեանքի մէջ

Շար. 19 8

Պատկածել ժաիրը եւ Մենք

ՉԱՐԻՔԻՆ ՄԷՋԻ ԲԱՐԻՔԸ ՏԵՄՆԵԼՈՒ ԱՐՈՒԵԱՏԸ



Տիրուկ Մարգարեան Կարապետեան

Պատկածել ժաիրը, բնականաբար, շատ փոփոխութիւններու առիթ տուաւ եւ այդ փոփոխութիւններէն ոմանք արմատական էին եւ այդպէս ալ պիտի մնան:

Իւրաքանչիւր երկիր տարբեր մարտահրաւերներու դէմ գտնուեցաւ ու առ այսօր վարակուածներու կամ բուժուողներու թիւերով է, որ կը ճշդուի գալիք օրերու՝ ժաիրին դէմ պայքարին կամ անոր պատճառած դժուարութիւնները դիմագրաւելու միջոցներն ու կարելիութիւնները:

Քանատայի պարագային, նախքան 16 Մարտը, այսինքն՝ նախքան դպրոցական գարնանային արձակուրդը, արդէն «Զորուս» անուանուած սկսած էինք լսել եւ դպրոցներուն ու մանկամտօրներուն մէջ սկսած էինք հականերխի գործաձեւում եւ յաճախակի կերպով ձեռք լուսալու մղել աշակերտները: Գարնանային արձակուրդը երկարաձգուեցաւ, ապա՝ կառավարութիւնը յայտարարեց, որ բոլոր դպրոցները պարտաւոր են դասաւանդումը առցանց կատարել ու բոլոր աշակերտները յաջողած համարելով՝ դպրոցները իրենց դռները բանաւ յաջորդ տարեշրջանին: Միեւնոյնը եղաւ մանկամտօրներու պարագային, սակայն այս ամիս կարգ մը մանկամտօրներ, առողջապահական նոր միջոցներ որդեգրելով, սկսան բանալ իրենց դռները:



Անցնող չորս ամիսներու ընթացքին ընտանիքները աննախադէպ խնդիրի առջեւ կանգնած գտան իրենք գիտէին: Նախքան «Զորուս»-ը, աշխատանքի երթալու պարտաւորութեամբ, իրենց գաւակները օրական երեքէն չորս ժամ տեսնող ծնողները, տուն պիտի մնային եւ 24 ժամ պիտի խնամէին իրենց գաւակները, միեւնոյն ժամանակ տունը ընտանիքը առցանց պիտի շարունակէին իրենց սեփական աշխատանքը: Անշուշտ, մարդոց մեծամասնութիւնը իրենց տուններէն սկսան աշխատիլ, իսկ ժաիրին պատճառով աշխատանք կորսնցողները եւ աշխատավայրերը փակողները անօգնական չմնացին, ընդհակառակը՝ հակառակ տնտեսական դժուար պայմաններուն, պետութիւնը, ամսական դրութեամբ, շտապ օգնութեան գումարներ յատկացուց անոնց, ինչպէս նաեւ գործատերներուն, ուսանողներուն, եւ այլն:

Հիւանդանոցի մէջ պաշտօնավարող բժիշկները իրենց կեանքը վտանգելով շարունակեցին աշ-

խատիլ եւ կեանքեր փրկել:

Շատեր հոգեկան տագնապներու ենթարկուեցան եւ վարակուելու վախով տառապեցան, ինչպէս նաեւ տան մէջ բանտարկուած, միջավայրէն հեռացած եւ անմիջական ու ֆիզիքական հեռաւորութիւն պահելու պարտաւորութեան ենթարկուելու պատճառով հոգեկան խանգարում ունեցան: Պատկերներուն համար ալ շատ դժուար էր իրենց դըպրոցէն եւ ընկերներէն հեռու մնալը, ապա՝ առցանց դասաւանդութիւնն ու արդիական միջոցներով իրարու հետ կապի մէջ մնալը ձեւով մը մխիթարեց գիրենք:

Ամիսներ առաջ, հանրակառքի եւ շոգեկառքի մէջի խճողումը, ճանապարհներուն վրայի խցանումները եւ մարդոց վազվզուքը տեսնելով «Երանի այդպիսի դրութիւն մը ըլլար, որ մարդոց աշխատավայրերը իրենց տուններուն մօտ ըլլային», կ'ըսէի. երբեմն ալ ես ինծի՝ «Եթէ կախարդական փայտիկ ունենայի, մարդոց տուններուն տեղերը կը փոխէի ու իրենց աշխատավայրին մօտիկ կ'ընէի», կը կրկնէի: Ե՛հ, վերջապէս բոլորս ալ նուագագոյն հաշիւով օրական երկու ժամ ճամբայ կը չափենք՝ հասնելու համար մեր աշխատավայրերը: Այդ փայտիկը երբեք չունեցայ, սակայն այս ժաիրը եկաւ եւ մարդոց վարժեցուց տունէն աշխատիլ: Այժմ կայարաններուն ու հանրակառքերուն մէջ առաջուան խճողումը չկայ, եւ աշխատանքէն չուշանալու համար վազողներու չենք հանդիպիր, բայց տունէն աշխատիլս ալ իր կարգին շատ մեծ փոփոխութիւն բերաւ մեծ ընկերութիւններուն համար: Հսկայ գումարներ ծախսող եւ գրասենեակներ վարձող ընկերութիւնները սկսեցին փոքրացնել իրենց վարձած տարածքները եւ ափսոսանք ապրեցան այն բանին համար, որ տարիներով գրասենեակներու վարձքի համար հսկայ գումարներ ծախսած են, այս պարագային գործաւորներն ալ պէտք չունեցան հազուստ-կապուստի կամ արդու գարդի համար միւսուներ ընելու, ժամերով ճամբայ չափելու, ընդհակառակը՝ իրենց տան հանգստաւէտ պայմաններուն մէջ շարունակեցին եւ առ այսօր կը շարունակեն աշխատիլ: Կը կարծեմ, որ նոյնը պիտի ըլլայ կարգ մը համալսարաններու եւ դպրոցներու պարագային, որոնց դասաւանդումը հեզասահ կը շարունակուի առցանց, իսկ քարաշէն շէնքեր կամ դասարաններ ապահովելու համար վարձք տալու եւ մեծ գումար յատկացնելու պարտաւորութիւնը պիտի իջնէ շատերու ուսերէն:

Հոս, մարդիկ կը հետեւին կառավարութեան սահմանած օրէնքներուն եւ առողջապահութեան նախարարի ցուցումներուն, արդէն ուր որ երթաս կարգի պիտի կենաս ու պարտադիր երկու մէթը հեռաւոր-

Շար. 19 9

ԿԱՄԱԻՈՐ ԾԱՌԱՅՈՂ ՀԱԼԷՊԱՀԱՅ ԵՐԻՏՏԱՍԱՐԳՆԵՐԸ՝ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄԻՆ ՆԱԽՕՐԷԻՆ ՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

Հալեպահայ կամաւոր ծառայող երիտասարդներուն միջև ուժը հաւատքն է, դարբնոցը՝ կազմակերպութեամբ, կամաւոր աշխատանքի մշակոյթը պահպանող հալեպահայ միութիւնները: Այս երիտասարդներուն հաւատքի արտայայտութիւնը՝ նուիրումն է, կարգախօսը՝ հաւաքական աշխատանքով համայնքի աշխոյժ կեանքին պահպանումը, սնունդը՝ Զրիստափորներու միտքը, Ռոստոմներու կամքը եւ Չաւարեաններու խիղճը:

Աշխատանքին ու իրենց նպատակին հանդէպ անոնք հաւատք կը տա-



ծեն ու այդ հաւատքը գործի կը վերածեն՝ ընդելուզուելով մէկ ընտանիքի մէջ՝ հալեպահայ կամաւոր ծառայող երիտասարդներու ընտանիքին:

Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու ազգի թեկնածուին նախընտրական քարոզարշաւն ու այլ աշխատանքները վստահուած էր այս տղոց ու աղջիկներուն, որոնք կու գային Սուրիահայ երիտասարդական Միութեան, Զրիստափոր Ուսանողական Միութեան, Համագայիկի, ՀՄԸՄ-ի, Սուրիահայ Օգնութեան Խաչի, Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի Շրջ. Միութեան շարքերէն: Անոնք ստանձնեցին պատասխանատուութիւն թելադրող տարբեր գործեր՝ նախընտրական ժողովրդային հաւաքի կազմակերպումէն մինչեւ քարոզարշաւի մասնակցութիւն, ժողովուրդին մօտ քուէարկութեան մասնակցութեան կարելորութեան շեշտադրումէն մինչեւ քուէարկողները հանրակառքերով քուէատուփեր առաջնորդելու պատրաստակամութիւն, ընտրական տարբեր տեղամասերու քուէարկութեան ստույկներու հսկողութենէն մինչեւ ընտրական կազմակերպչական աշխատանքներու օժանդակութիւն:

Աւելի քան չորս հարիւր երիտասարդներ, նօսրացած համարուող մեր համայնքին մէջ, անգնահատելի աշխատանք տարին, արժանանալով հայ եւ օտարազգի տեղացիներու գնահատանքին: Պսակածե ժահրի համաճարակը, երկրին ու ժողովուրդին դիմագրաւած տարբեր դժուարութիւնները չընկճեցին զիրենք, գիշեր-ցերեկ պատրաստ էին աշխատելու՝ հաւաքական շահին ծառայելու միակ ակնկալութեամբ եւ գոհունակութեամբ:

Անոնք յուսահատ հոգիներուն յոյս ներշնչեցին, միգամած հորիզոններուն ծիածան կապեցին ու գործին, նպատակասլաց գործին կարելորութիւնը անգամ մը եւս շեշտադրեցին:

Ձեր վարձքը կատար, տղաք ու աղջիկներ:

ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ ՄՇԱԿՈՅԹ Է



Գրիգոր Տունկեան

Համագայիկի Սուրիոյ կազմակերպութեան աշխոյժ մասնաճիւղերէն Հալեպի ինստիտուտայ «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի կազմակերպութեամբ 23-26 Յուլիս 2020-ի, «Գ. Եսայեան» սրահէն ներս, երաժշտասեր հանրութեան ներկայացուցաւ «Աշուղական Երեկոյ» վերնագրուած գեղարուեստական բարձրորակ ձեռնարկ մը:

Հակառակ տիրող անբարենպաստ պայմաններուն, Համագայիկը, իր առաքելութեան հաւատարիմ, հայ մշակոյթի պահպանման եւ տարածման իր անփոխարինելի նպաստը մատուցեց, վերականգնող քաղաքի հոգեմտաւոր վերականգնումին սատար հանդիսանալով:


Անցնող տասնամեակին հետեւանք թուային եւ որակական նօսրացման յաճախ կրկնող յիշեցումներուն դիմաց խնամուած յայտագիրով հայ մշակոյթի գոհարներու ներկայացման այս երեկոն հոգեկան վայելք էր եւ հակափաստարկ միաժամանակ:

Հանդիսատեսը ըմբոշխնեց մեր ազգային ակունքներէն բխող գունասական երգի եւ երաժշտութեան իւրայատուկ վայելքը, երիտասարդ եւ շնորհալի արուեստասերներու կատարողութեամբ:

Վարձքը կատար՝ նորաստեղծ աշուղական նուագախումբին եւ մենակատարներուն, մշակութային գործի որակական վերականգնումին համար հաստատակամութեամբ գործող համագայնականներուն (հոս՝ երաժշտական յանձնախումբին):

ՎԿՆԱՐԿ

ՈՐՊԷՍՁԻ ՆԻԹԼԵՐԵԱՆ ՆԱԽԸՆԹ-ԱՅՐ ԶԿՐԿՆՈՒԻ...



Ս. Մահսերճեան

Աշխարհի նորագոյն պատմութիւնը ուսումնասիրող ուսանողը, երբ կը հասնի Բ. Աշխարհամարտը կանխող տասնամեակներուն եւ կը սկսի սորվիլ կործանարար պատերազմին պատճառներուն ցանկը, կը հանդիպի հետեւեալ հաստատումներուն: Հիթլերի շրթայագ երծած պատերազմը հետեւանք էր նա՛ն ալ վիճակին, որ կը տիրէր Եւրոպայի մէջ, Ա. Աշխարհամարտէն ետք: Հիթլեր կը ներկայացուի իբրեւ ծուռնորդ՝ պարտեալ Գերմանիոյ ապրած յուսախաբութեան ու անոր պարտադրուած սանձումներուն. «Ֆիւլեր»ը նոր դրօշակիրն էր գերմանական կայսրութիւն մը ստեղծելու նախորդներուն երազանքին, իսկ Եւրոպայի հզօրները տարիներ շարունակ հանդիսատեսի աչքով հետեւեցան անոր ծայրայեղական քայլերուն, ուժի վերականգնումին եւ այլոց հանդէպ ոտնձգութիւններուն, աճող վտանգը տեսնելով հանդերձ՝ ձեռնածալ մնացին, որովհետեւ, ի շարս այլ պատճառներու, յոգնած էին պատերազմելէ, չէին նախընտրէր լայնածիր նոր պատերազմի մը մէջ մտնել: Ուսանողը իր գիտելիքներուն վրայ կ'աւելցնէ նաեւ այլ մեկնաբանութիւնը, թէ Եւրոպան եւ Գերմանիոյ հակադիր ուժերը եթէ զգաստ ըլլային ու աւելի կանուխ շարժէին Հիթլերի դէմ, աշխարհին հաւանաբար ինչայնչէր Բ. Աշխարհամարտը:

(Կան անշուշտ բազմաթիւ այլ բացատրութիւններ, մեկնաբանութիւններ, որոնք շարքին այն՝ որ կային Հիթլերի Գերմանիոյ հետ առեւտուր ընդոչահ ապահովողները... Այս ու նման մեկնաբանութիւններ ձգենք այս փակագիծին մէջ):

Հիթլերի Գերմանիոյ հզօրացումն ու անոր հանդէպ կրաւորականութիւնը, անտարբերութիւնն ու գործնական քայլերու բացակայութիւնը եզակի պարագայ չէ աշխարհի պատմութեան մէջ, սակայն բաւականանալով անով, արձանագրելու համար մեր մտահոգութիւնը:

100 տարի առաջ, Սեւրի դաշնագիրով տարանջատու մի ենթարկուած Օսմանեան կայսրութիւնը կ'աշխատի վերածեալու ինքզինք, նման Հիթլերի Գերմանիոյ: Մասնաւորաբար Էրտողանի իշխանութեան շրջանին, Թուրքիա միակգամընդմիջտ մէկդի ձգած է նախորդներուն քողարկեալ տարազները: Թուրքիոյ ձեռքերը կ'երկարին անմիջական դրացիներէն շատ անդին, դէպի Ափրիկէ, արաբական աշխարհի ու Ասիոյ որոշ գօտիներ եւ, անուղղակիօրէն՝ դէպի Եւրոպա: Այս բոլորը տեղի կ'ունենան բռնատիրութիւններ եւ կայսրութիւններ մերժող աշխարհին բաց աչքերուն առջեւ: Թուրքիա ո՛չ միայն զինուորական միջամտութիւններ կ'ընէ հոս-հոն (քաջալերանք ալ կը ստանայ նման արկածախնդրութիւններէ շահ ապահովողներէ), այլ նաեւ աչքերը տնկած է այլ շրջաններու վրայ, այն բարձրադասակ «արդարացումով», թէ այդ շրջանները մաս կազմած են Օսմանեան կայսրութեան: Աւելին, Թուրքիա լաւագոյնս կը շահագործէ գաղթականներու տագնապը՝ նիւթապէս կողոպտելու համար իր... դաշնակիցները՝ եւրոպացի, ամերիկացի եւ... արաբ:

Օսմանեան կայսրութեան դաժան ժառանգութիւնը ծածուկ չէ: Եթէ մենք՝ հայերս կրած ենք ծանրագոյն հետեւանքները՝ Յեղասպանութեան ենթարկուած ենք, այլ երկիրներ ու ժողովուրդներ, անկախ իրենց ազգային կամ կրօնական պատկանելիութենէն, առաւել կամ նուազ չափով ճաշակած են եաթաղանին համբ:

Անցեալի ու այսօրուան այս իրականութիւններուն քաջածանօթ աշխարհը, մասնաւորաբար մենք՝ հայերս ու ճակատագրակիցներ՝ յոյն, կիպրացի, արաբ, քիւրտ եւ այլք, միասնաբար կանգնած ենք մարտահրաւերի մը դէմ յանդիման. կասեցնել Օսմանեան կայսրութեան ու համաթուրանական ծրագիրներուն ծաւալումը, աւելին՝ գսպել եւ իր չափին վերադարձնել Թուրքիան: Հիթլերի Գերմանիոյ հանդէպ ցուցաբերուած կրաւորականութիւնն ու անգործութիւնը աղետ բերին: Էրտողանի յոյսորտանքներուն իրականացումը նուազ աղետալի պիտի չըլլայ: Նախաճաշակները կը կրենք նա՛ն մենք, թուրք-ազերի անսքող գործակցութեամբ:

Ուրեմն, պետք է արթննալ եւ գործի լծել պետական, դիւանագիտական, քաղաքական եւ կարելի բոլոր միջոցները, որպէսզի հիթլերեան նախընթացը չկրկնուի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Համասեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՃՈՐՃ ՀԱՄԱՍԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունից հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 2 Օգոստոս 2020-ին, յաւարտ Ս. եւ Վնձահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

ՆՐԱԺԵՇՏԻ ՆԱԲԱԲ ԱԶԳ. ՄԻԱՅԵԱԼ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ Ազգ. Միացեալ Նախակրթարանի Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան, տեղի ունեցաւ Ազգ. Միացեալ Նախակրթարանի վեցերորդ կարգի շրջանաւարտ աշակերտներուն հրաժեշտի հաւաքը, Չորեքշաբթի, 15

համային ասմունքով անոնք մատուցեցին «Հայաստան», «Խրիմեան Հայրիկին» եւ Փոքրիկներուն Հայրենիքի Սիրոյ Նուիրուած ասմունքի կտորները: Ասմունքին ընդմէջէն շրջանաւարտները մեծարեցին Հայոց Հայրիկը, որուն ծննդեան 200-ամեակը բոլորուեցաւ այս տարի: Այնուհետեւ խօսք առաւ Ազգ. Միացեալ Նախակրթարանի Տնօրէն



Յուլիս 2020-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս:

Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով սկիզբ առաւ հանդիսութիւնը, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին յիշատակը հայրենիքի նահատակներուն:

Բացման խօսք ներկայացուց հայերէնաւանդ ուսուցչուհի Մարալ Ապուքեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, Նշեց, թէ հակառակ պակասեցնելու ժահրի համավարակի սահմանափակումներուն, Հոգաբարձութեան, Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին միասնական աշխատանքով 2019-2020 տարեշրջանի վեցերորդ կարգի աշակերտները ամբողջացուցին

նուիր Չեփիւն Բեխեան, որ ամփոփ գեկոյց ներկայացուց անցնող ուսումնակրթական տարեշրջանին մասին յայտնելով, որ հակառակ պակասեցնելու ժահրի համավարակի սահմանափակումներուն՝ գործակցաբար կարողացանք ամբողջացնել շրջանաւարտ աշակերտներուն ուսումնական ծրագիրը եւ յարմարութիւնը ստեղծելով հրաժեշտի հաւաքի ուրախութենէն չզրկեցինք մեր շրջանաւարտները: Տնօրէնուհին շնորհակալական խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազան Զօր իր հայրական հովանավորութեան համար, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան, Ուսումնական Խորհուրդին, Վարժարանի Հոգաբարձութեան եւ նուիրեալ ուսուցչական կազմին: Շնորհակալական յատուկ խօսք ուղ-



իրենց անհրաժեշտ ուսումնակրթական ծրագիրը եւ այժմ գեղարուեստական կոկիկ յայտագիրով հրաժեշտի հաւաքին ուրախութիւնը կ'ապրին միասին:

Շրջանաւարտ աշակերտները հանդես եկան գեղարուեստական կոկիկ յայտագիրով: Հնչեցին «Հայաստան», «Երգի Հետքերով», «Կանաչ ու Կը լինենք» երգերը եւ «Կիլիկիա» մաղթերգը: Աշակերտները արաբերէն լեզուով խանդավառօրէն ներկայացուցին փունջ մը հայրենասիրական երգեր:

ղեց վարժարանին իրենց նիւթաբարոյական օժանդակութեամբ նեցուկ կանգնող մարմիններուն եւ բարերարներուն, ի մասնաւորի Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան, որոնց նուիրատուութեամբ հրաժեշտի հաւաքին հիւրասիրութիւնը ապահովուեցաւ:

Ապա, տնօրէնուհին բեմ հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրը յուշանուէրով պարգեւատրելու վարժարանի պետական տնօրէն Լուէյ

Թղթակից
Շար.՝ 12 9 ➤

ԿՐԹԱՍԻՐԱՅ Ս. ՉԵՄՊԵՐՃԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐՇԱՐԱՆԸ 2019-2020 ՏԱՐԵՇՐՋԱՆԸ ԲՈՒՈՐԵՅ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ԱԲԱՐՏԱԿԱՆ ՆԱՆԴԵՍՈՎ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Կիրակի, 26 Յուլիս 2020-ին, յետմիջօրէի ժամը 5:00-ին տեղի ունեցաւ Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ վարժարանի 2019-2020 տարեշրջանի միջնակարգի եւ երկրորդականի ավարտական հանդէսը, Կրթասիրաց Մշկթ. Միութեան «2. Գաբրիէլեան» սրահէն ներս:

Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով սկիզբ առաւ հանդէսը, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին յիշատակը Հայաստանի, Արցախի եւ Սուրիոյ նահատակներուն:



Հայերէն եւ արաբերէն բացման խօսք արտասանեցին 9-րդ կարգէն աշակերտներ: Հանդէսը նուիրուած էր Խրիմեան Հայրիկի ծննդեան 200-ամեակին: Աշակերտները թատերգութեան ընդմէջէն գեղարուեստական ամբողջական յայտագիրով՝ երգով, պարով, խօսքերու արտասանութեամբ ու թատերական պատկերներով մեծարեցին Հայոց Հայրիկը

գրական բաժին՝ Մարիթա Ռազուգ: Որպէս տիպար աշակերտ պարգեւատրուեցաւ Ռազմիկ Մազլումեան, որպէս կիրթ աշակերտ՝ Ներսէս Թիւֆէնքճեան, իսկ որպէս օրինակելի աշակերտ՝ Յարութ Իսկէնեան:

Յատուկ ուշադրութեան արժանացան եւ գնահատագիրով ու նիւթական քաջալերական պարգեւով գնահատուեցան 12-րդ կարգէն հայերէն լեզուի հետեւեալ առաջնակարգ աշակերտները՝ Փաթիլ Բէչէճեան, Ժենի Զիլ Գեորգեան, Լիլա Աթաշեան, Ալիսա Լախոյեան, Լալա Տապաղեան, Անժելա Բելլեան եւ Յակոբ Գասարեան:

Ողջունելի քայլով մը, Համագայինի Հայագիտական Հիմնարկի Վարչութեան կողմէ հայերէն լեզուի առաջնակարգ առաջին երկու դիրքերը գրաւող աշակերտուհիներ՝ Փաթիլ Բէչէճեան եւ Ժենի Զիլ Գեորգեան հայագիտական քառամեայ ուսումը անվճար ուսանելու կարելիութիւն ստացան:

Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան



եւ իր «Երկաթ շերտի» խնամակար ճառով վերանորոգեցին իրենց ուխտը՝ մնալու հաւատարիմ գաւակները ազատատենչ հայ ժողովուրդին: Ապա ներկայացուցաւ արաբերէն եւ հայերէն ասմունք եւ մեներգ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ առաջնակարգ աշակերտներու պարգեւատրում գնահատագիրով եւ նիւթական քաջալերական նուէրով: Պարգեւատրուեցան 2018-2019 տարեշրջանի պետական քննութեանց բարձրագոյն նիշ ապահովող հետեւեալ աշակերտները, պրովէ՝ Միրա Ֆատիլ, պաքալորիայի գիտական բաժին՝ Էլի Իշուհ, իսկ

եան յատուկ կարգադրութեամբ ուսուցչական եւ վարչական կազմերէն գնահատագիրով եւ ծաղկեփունջով պարգեւատրուեցան հետեւեալները:-

Տիար Մուհամմետ Հաֆէզ (վարժարանի պետական տնօրէն)

Տիկ. Սօսի Աւետեան-Պապեան (անգլերէն լեզուի ուսուցչուհի)

Օրդ. Սառա Մաթօ (փիլիսոփայութեան առարկայի ուսուցչուհի)

Օրդ. Ալիսա Արամեան (արաբերէն լեզուի ուսուցչուհի)

Տիար Յովիկ Օհանեան (տեսուչ), որ սոյն հանդէսի բովանդա-

Թղթակից
Շար.՝ 12 9 ➤

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ-190



Լալա Միսկարեան-Մինասեան

Ռափայել Պատկանեանի հայրենի քնարին գլուխ գործոցը նկատուած է «Արաքսի Արտասուքը» քերթուածը, գոր Րաֆֆի գնահատած է իբրեւ «Յայ բանաստեղծութեան թագուհի»: Յայոց հայրենասիրական քնարը հետագայ տարիներուն, անշուշտ, այլ թագուհիներ եւս տուաւ, բայց իր օրերուն այս քերթուածը բացառիկ ընդունելութիւն գտաւ, յատկապէս երբ երգի ալ վերածուեցաւ ու տարածուեցաւ հայաշխարհի բոլոր ծագերը: Զերթուածին ոգին անմահ է, ան այսօր ալ կ'ապրի եւ մեր կեանքի կարգ մը հարցերուն կ'արձագանգէ:

Պարզուկ լեզուով գրուած այս քերթուածին համագային լայն ընդունելութեան պատճառը եւ իր արժէքը միայն արուեստին մէջ չէ, այլեւ հոն դրուած խորհուրդին: Առաջին իսկ համարներէն ընթերցողին պարզ կը դառնայ, որ ռոմանթիկ բանաստեղծը, խօսելով Մայր գետին հետ, գայն կ'ընդունի իբրեւ Յայրենիքի խորհրդանիշ: Նոր սերունդը (հեղինակ) անոր կը դիմէ հարցումով՝

**Ինչո՞ւ արցունք ցայտում ես
Քու սեզ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախում ես
Այդ հարագատ ափերից:**

Սակայն Յայրենիք-գետը կը գայրանայ «անմիտ» պատանիին հարցումէն ու իբրեւ պատասխան, իր նախկին փառաւոր օրերուն կը հակադրէ այսօրուան ստրկացուած ու աներակ վիճակը.

**Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտից գլուխ պճնուի
Իր զարդերով թանկագին:**

Սիրելին՝ ամուսինը Յայրենիքի ազատութիւնն ու հայրենի պետականութիւնն են, որոնց կորուստով երկիր-գետը այրիացեր է: Մեր գրականագիտութեան մէջ եղած է կարծիք, թէ Արաքսը այդ վիճակէն ելքի միջոց չունէր, այլ խօսքով՝ Պատկանեան իր առաջադրած հարցումին պատասխան չունէր, հետեւաբար քերթուածը կ'աւարտէ անորոշ.

**Էլ չխօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ- օղակ օձի պէս
Առաջ սողաց մուկզին:**

Նոյնը ըսուած է նաեւ Րաֆֆիին համար, երբ ան հարցումով կը դիմէ Վանայ լիճին՝

**Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Վշտակից լինել չկամի՞ս դժբախտիս...**

Նախ յիշենք, որ ռոմանթիկ բանաստեղծներ յաճախ կը դիմէին ճարտասանական (հռետորական) միջոցներով՝ հարցում, բացագանչութիւն, աւաղում եւ այլն: Ինչ կը մնայ Պատկանեանին ու Րաֆֆիին, անոնց ամբողջ ստեղծագործութեան ոգին մի եւ նոյն պատասխանն է այդ հարցումին՝ պայքար ազատագրութեան համար: Եւ ահա Պատկանեան Արաքսին պատասխանը կու տայ անուղղակիօրէն, ինչպէս վայել էր քերթուածի մը. Արաքսին երդումը կը ինչէ որպէս պատգամ հայոց երիտասարդութեան.

**Քանի որ իմ գաւակունք
Այսպէս կու մնան պանդուխտ,-
Ինձ միշտ սգուոր կը տեսնեք
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...:**


Աւելի քան յստակ ու մեկին է պատասխանը, որ անուղղակի թելադրանք է հայրենադարձութեան եւ յանուն ազատութեան ու անկախութեան պայքարի: Այսօրուան մեր իրականութեան հետ Պատկանեանի գաղափարի հարագատութեան մէկ վկայութիւնը եւս: Ան նոյն գաղափարը, նոյն յըստակութեամբ, արտայայտած է իր ստեղծագործութեան լայնքին ու երկայնքին ու յատկապէս «Վարդանի Երգին» մէջ, որ ծանօթ է որպէս «Յիմի՞ Է Լռենք»՝

**Թող լռեն մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելլենք թշնամու առաջ-
Գունէ մեր փառքը մահով ետ խլենք-
Ու այդպէս լռենք:**

Նշուեցաւ, որ հայ մտաւորականութեան մեծ մասը յոյսով կը սպասէր Պերլինի վեհաժողովին արդիւնքը: Եւրոպան բացարձակ անտարբերութեամբ անտեսեց ու իր շահերուն գոհաբերեց հայոց արդար սպասումները: Գոյութիւն ունի կարծիք մը, որ Պերլինի վեհաժողովին յաջորդող շրջանը կատարեալ յուսալքութեան շրջան էր մեր գրականութեան մէջ: Սակայն, իրականութեան մէջ, հիասթափութիւնը կարճ տևեց, յուսալքութեան չտարաւ հայութիւնը, ընդհակառակը, հայ մտաւորականներ սթափեցան ու անդրադարձան, թէ գերագոյն ճշմարտութիւնը սեփական ուժին վստահիլը, ժողովուրդին քննադատ ոգին արթնցնելն է: Խրիմեանի «Երկաթէ Շերեփ»ի ճառի ոգին՝ «Չէնք առէք եւ դարձեալ գէնք...» մինչ օրս սթափութեան կոչ է հայրութեան: Եւրոպայի հանդէպ Պատկանեանին վերաբերմունքը տատա-

նումներ կ'ունենայ: Ան երբեմն յոյսեր կը կապէ Եւրոպական «լուսաւոր» ազգերու օգնութեան հետ, երբեմն կը հիասթափուի ու կը գայրանայ, քանի որ Յայաստանը շատ անգամ պատուար եղած է Եւրոպայի համար, իսկ անոնք երախտամոռ են իրենց քրիստոնեայ քրոջ հանդէպ: Իշխող տրամադրութիւնը կ'ծու մեղադրանքն է «արիւնածարաւ», «անգութ» Եւրոպայի, որ «Նախ՝ անմեղութիւնն մեր խոստովանեց, ապա չարերուն մեզ ի խաչ մատնեց»: Կ'ունենայ նաեւ «սրտի վկայութիւն», թէ՛ «ԶԷ՛, Է՛, դահիճ չեն լուսաւոր ազգեր, վստահենք, նոքա չեն մորթել հային, չլուսահատուենք, իմ եղբայր հայեր, մեզ էլ իրաւունք կու տան մարդկային»: Վերջապէս կայ միայն սեփական ուժերուն վստահելու կոչը: «Ո՞ւր է, դու գիտե՞ս, բախտդ ու փառքդ ու ազատ կեանքդ: Ի ծայր քո սրին»-կը գրէ «Մշտնու Յեկեկանքը» քերթուածին մէջ:

Եւ որպէս վկայութիւն արդէն իշխող այս տրամադրութեան, 1883-ին գրուած «Երդումն» քերթուածով ան ծայրը հայ երիտասարդին կու տայ: Նոյնիսկ հայրենասիրական տրամադրութիւններով գերյագեցած հայ գրականութեան մէջ այս քերթուածը այն բացառիկներէն է, որ կը ցնցեց ընթերցողը հայրենի երկրին հանդէպ անկաշառ սիրոյն, անմնացորդ նուիրումին ու յանուն անոր անկախութեան իր «դաժան» ինքնամերժումին ուժգնութեամբ: Երիտասարդը նախ իր երդումին վկայ կը բերէ անձնական ու ազգային բազմաթիւ սրբութիւններ, լիովին կը գիտակցի իր ճանապարհին սպասելի բոլոր դժուարութիւններուն, սակայն իր երդումը անշեղ է, իր սուրը չի մտներ պատեան, «Մինչեւ չազատուի ստրուկ Յայաստան»:



Ինչպէս որ հերոսը կը պահանջէ՝ «Թող ինձ հետ երդնու ազգը յաւիտեան», այդ երդումը «Եարի փոխան գէնք գրկած» ֆիտայիներուն էր: Այդ կրակէ երդումին կրողներն էին ու ե՛ն երեկուան ու այսօրուան բոլոր կամաւորները: Յակասական բեւեռներու մեկտեղում. այս ազգը այսօր ալ նոյն ընտրանքին առջէ է: Եւ այն պարագային, երբ ոմանք իրենց որդիները «կ'ազատեն» հայրենիքի պաշտպան գիւնուոր ըլլալէն, ուրիշներ, Սփիւռքի մէջ իրենց բարեկեցիկ կեանքը կը ձգեն ու կ'արձագանգեն «Յեղի Ձայնին» կամ մարտական ծառայութեան, ժամկետը լրանալէն ետքն ալ կը մերժեն զօրացրուիլ, քանի դեռ հայրենիքին սահմաններուն վտանգ կը սպառնայ...:

Պատկանեան, ինչպէս նշեցինք, ծայրայեղ է իր վերաբերմունքին մէջ: Յայ մարդուն արժէքը ան կը տեսնէ միայն հայրենիքին հանդէպ անոր կեցուածքին ընդմէջէն: Ան հայ ըլլալը չի չափեր արտաքին երեւոյթներով՝ հայ ծնած ըլլալով, ազգային տարագրով, խոհանոցով, սովորոյթներով, հայրենասիրական խօսքեր ինչեցնելով: Ըստ հեղինակին՝ իւրաքանչիւր մարդ, որ ինքզինք հայ կը դաւանի, պարտաւոր է տեղեակ ըլլալ ազգի անցեալի պատմութեան եւ անմիջականօրէն մասնակից ըլլալ իր օրերու կեանքին («Յայ եւ Յայութիւն»), մէկ խօսքով՝ արթուն քաղաքացիական կեցուածք.

**Սիրէ՛ ազգդ, բայց ոչ խօսքով, սիրէ ինչպէս քու անձը,
Նորա օգտին, թէ պէտք լինի, զոհէ բոլոր քո գանձը.
Մի՛ խնայիր կեանքդ անգամ, արիւնդ բեր նորան զոհ,
Ոչ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզից զոհ:
Իսկտակ սերը չի պահանջում ամենեւին տրիտուր,
Թէ տուածը ետ առնուի՝ դորան կ'ասեն առետուր:**

Խտացուած միտքերով խօսք, անժամանցելի ճշմարտութիւններ, որոնք որեւէ ժամանակ սերունդի մը հայրենասիրական ոգին արթնցնելու ունակ են:

Պատկանեան պարսաւանք ունի նաեւ հայկական անարժէք նկատող, հայութեան հեռացող, օտարինը կապկող հայ երիտասարդներուն համար («Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ», «Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ»): Այս իմաստով եւս ան մեր օրերուն հետ կը խօսի, միայն թէ Պատկանեան մեղաւոր կը նկատէ ո՛չ այնքան երիտասարդները, որքան որ անոնց տրուած ընտանեկան դաստիարակութիւնը: Այդ գաղափարը ան առաւել կը շեշտէ իր արձակ գործերուն մէջ:

Ըլլալով իր օրերու բազմակողմանի կրթուած մտաւորականներէն մին, գարթօնքի սերունդի իր ժամանակակիցներուն նման, Պատկանեան մեծ կարեւորութիւն կու տար նաեւ մարդու ազգային դաստիարակութեան ազգային երգի ազդեցութեան: Ան առաջիններէն էր, որ հրատարակեց «Ազգային Երգարան Յայոց»ը, ուր կային ե՛ւ իր քերթուածներէն, ե՛ւ այլ ազգային երգեր: Պատկանեանի բառերով ամենէն նշանաւոր երգերէն են՝ «Օրօրոցի Երգ» («Քուն Եղիր, Պալաս»), «Արաքսի Արտասուքը», «Յիմի՞ Է Լռենք»

ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒԻ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԱ (3)

Արմենակ Եղիայեան

1951-52 տարեշրջանը բաւական փոփոխութիւններ բերաւ Աբգարեանին...

Հայոց լեզուի մեր նոր ուսուցիչն էր արտասովոր մարդ մը, որ միաժամանակ դպրոցի տնօրէնն էր...



Աղդանիկ Ծառուկեան

Ինքզինք այսպէս «սիկիլիական մաֆիոզ»-ի նմանցնող անձը ոչ աւելի, ոչ պակաս Անդրանիկ Ծառուկեանն էր...

Խոստովանիմ, որ մեր մէջ ամենէն հասունն ու իրազեկն ալ ոչ մէկ գաղափար ուներ իր մասին...

Միւս կողմէ, սակայն, դժուար է պատկերացնել ուսուցիչ մը, որ իր արտաքինով թէ մտաւորական պաշարով...

Հակառակ իր մեծի կազմին՝ ան դասարան կը մտնէր մանր, գգոյշ ու հանդարտ...

Այո՛ր, վարակիչ էր այդ կաղութիւնը:

Ու մենք շատ շուտ վարակուեցանք անկէ:

Վասնզի ամիսը չլրացած՝ դասարանի բոլոր տղաքս սկսանք... կաղալ: Ծառուկեան այնքան տպաւորած էր մեզ, այնքան համակուած էինք իր մով...

Այլեւ ի մասնաւորի դասարանին մէջ՝ իր ներկայութեան:

- Յովհաննէ՛ս, գրատախտակին առջեւ:

Եւ Յովհաննէս կ'ելլէ տեղէն, անշուշտ որոշ... դժուարութեամբ, մէկ ձեռքով կը բռնէ գիրքը, միւսը կը տանի գիստին՝ օգնելու համար...

- Ի՞նչ ունիս, - դասը մոռցած կը հարցնէ Ծառուկեան:

- Չեմ գիտեր, պարոն, կռակի ցաւ մը, որ ոտքիս կը գարնէ կոր...

Եւ անկեղծօրէն ալ չի գիտեր, որովհետեւ քնախօսական իսկական ցաւ մը հազիւ թէ գոյութիւն ունենար:

Զիչ ետք միւսը, յաջորդ օրը ես կամ չորրորդ մը եւ այսպէս ամէն օր ու շարունակ. ամէն մէկը պատրուակ մը, շատ «լուրջ պատճառ մը» կ'ունենար...

Մինչեւ որ օր մըն ալ չի դիմանար ու կը պայթի Ծառուկեան.

- Ձեր մէջ մէկ հատ առողջ ոտք ունեցող չկա՞ր...

Առողջանալ ուզող կա՞ր, որ առողջ ոտք ունենայինք, հապա որո՞ւ ձգէինք իրեն պէս կաղալու պատիւը: Կայի՞ն մեզ մէ աւելի արժանաւորները:

Տարիներ ետք բժշկական տարեգրութեանց մէջ կը կարդայի անցած-


զացած պատմութիւններ, երբ աչքիս գարկաւ շատ ուշագրաւ դրուագ մը: 19-րդ դարու առաջին կեսին, - դուք ըսէ՛ք՝ երկրորդ քառորդին, - Անգլիոյ մէջ, աւելի ճիշդ՝ մի՛այն Լոնտոնի մէջ, կը տիրէ կաղութեան համաճարակ մը...

Մինչեւ որ...

Տասնամեակներ անց շատ երիտասարդ բժիշկ մը կը համարձակի յայտնել իր դասախօսներուն, թէ այս բոլոր կաղացողներուն ենթագիտակիցին մէջ կը գտնուէր...

Այս բոլորը տեղի կ'ունենան բնաստեղծին փառքի օրերուն, երբ ամբողջ Անգլիան, - եւ ոչ միայն Անգլիան, - հարբած էր Պայրընի հանճարով, այլեւ անոր ֆիզիքական տպաւորիչ գեղեցկութեամբ ու սիրային պատկերազարդ գայթակղութիւններու անվերջանալի պատմութիւններով...

Բայց ահա այս բոլորը իրապէս վերջ կը գտնեն, երբ օր մըն ալ անիծապարտ բնաստեղծը կ'ընէ շնորհալից յայտարարութիւն մը. «Եթէ այս բոլոր ըսի-ըսաւներն ու քսութիւնները ճիշդ են, ապա ես արժանի չեմ Անգլիոյ, իսկ եթէ սուտ են, ապա Անգլիան արժանի չէ ինձի»:



Լորտ Պայրըն

բայց խորապէս առիւնը բնաստեղծներու, երկուքն ալ կաղ, մէկը՝ անգլիացի, Լոնտոնի մէջ, միւսը՝ հայ, Պուրճ-Համուտի մէջ:

Իսկ մենք այդ պատմութիւնը նորովի կերտող ու անոր վաւերականութիւն դրոշմող անգիտակից դերակատարներն էինք:

Է՛հ, մենք չըլլայինք ալ՝ հապա ո՞վ ըլլար:

ՌԱՓՈՅԷԼ...

Սկիզբ՝ էջ 7

(Վարդանի Երզն, «Լռեց: Ամպերը Եկան», «Յոյս» (Թող Փչէ Զամին), «Օրորոցի Երգ» (Արի, Իմ Սոխակ) եւ այլն:

Մեր խօսքին մէջ, նշելով, որ Պատկանեան իր օրերուն «Ամբողջ ազգի կուռքն» էր, նոյն ատեն, կարգ մը քերթուածներու առթիւ, արուեստի տկարութիւնը նշեցինք: Եթէ առնենք լեզուի իմաստով՝ Պատկանեան գրած է նաեւ իր հայրենի Նոր Նախիջեանի բարբառով, սակայն, ինչպէս նշեցինք, ան առաջիններէն էր, որ կարեւորեց աշխարհաբարը, անոր վրայ ղնելով իր իւրայատուկ դրոշմը: Սակայն Պատկանեանի քերթողութիւնը չունի արուեստի այն մակարդակը, ինչ որ կը սպասուի քերթողութենէն ընդհանրապէս: Արուեստի կատարելութեան ձգտումը արեւելահայ ճակատի վրայ, ժողովուրդին հասկնալի ըլլալու պահանջին իբրեւ հետեւանք, առաւել դանդաղօրէն իրագործուեցաւ քան արեւմտահայ ճակատին վրայ եւ ձեւով մը գրական սկզբունք դարձաւ: Պատկանեանին նուիրուած այս շարքին մէջ չենք անդրադարձած

անոր արձակին՝ պատմութիւններ ու վիպակներ, որոնց մէջ եւս նոյն գգօն պահակն է ազգային նկարագիրին, արժեքներուն: Նշանաւոր գործերն են՝ «Փառաստերը», «Տիկին եւ Նաժիշտ» եւ «Ես Նշանած Էի»: Արձակին մէջ եւս անոր գրիչը միշտ հատու գէնք է ընդդէմ օտարամոլութեան, եսակեղոնութեան, ազգային հարցերուն հանդէպ անտարբերութեան: Այս յօդուածաշարը նուագագոյնն էր որ կրնայինք նուիրաբերել Մեծ Հայուն, ոգեկոչելով անոր շունչը՝ իբրեւ պատգամ մերօրեայ սերունդին:

ՄԵՐ ՄԵՐՈՒՆԴԻ...

Սկիզբ՝ էջ 4

Երբեմն դեմ յանդիման կը կանգնինք դառն իրականութիւններու, որոնք կ'արգելափակեն մեր տեսիլը:

Այդուհանդերձ, երախտապարտ ենք մեր դաստիարակներուն ու կրթական մշակներուն, որոնք մշակեցին մեր միտքն ու հոգին եւ ուսումնական կարճատեւ տարիները մեր կեանքը լուսաւորող փարփի վերածեցին: Բիւր յարգանք բուրիս:

ՇԱՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐԹԱՍԻՐԱՑ...

Սկիզբ՝ էջ 6

կալից յայտագիրը բժախնդրորեն պատրաստած էր:

Այնուհետև իր սրտի խօսքը ուղղեց վարժարանի տնօրեն, երկրչ. Անդրանիկ Պողոսեան, որ իր ուրախութիւնը յայտնեց երկրորդականի 12-րդ հունձքին և միջնակարգի 15-րդ հունձքին վկայուելուն առիթով: Ապա անդրադառնալով Կրթասիրացի առաքելութեան ըսաւ. «Կրթասիրացը 1924-ին ծնունդ առաւ հայ սերունդները հայեցի-քրիստոնէական դաստիարակութեամբ պատրաստելու: Տարիներու զլորումով ան դիմագրուեց շատ մը դժուարութիւններ, սակայն առանց տկարանալու 96 տարի ուսումնակրթական ջանք բարձր պահեց՝ շարունակելով իր սրբազան առաքելութիւնը, շրջանաւարտ դարձնելով տասնեակ սերունդներ, որոնք Սուրիոյ, Հայաստանի թէ՛ Սփիւքի գանազան ափերուն մէջ դեկավար դիրքերու վրայ կը գտնուին այսօր»:

Պարոն տնօրենը գնահատեց ծնողներուն հոգատար մօտեցումը իրենց գաւակներուն նկատմամբ եւ շնորհաւորեց շրջանաւարտ աշակերտները, անոնց մաղթելով բարեյաջող երթ ուսումնակրթական անդատանէն ներս:

Անդրանիկ Պողոսեան շնորհակալական խօսք ուղղեց Կրթասիրաց Մշկթ. Միութեան հնամակալութեան եւ վարժարանի Հոգաբարձութեան: Ընդհանրապէս յայտնեց Ազգային Իշխանութեան, Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինին, Գ. Կիւլպէնկեան Հաստատութեան, Ամերիկայի Կրթասիրաց Սանուց Միութեան, Հաւրտ Գարակեօզեան Հաստատութեան, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկին եւ Տորքաս հաստատութեան: Յատուկ շնորհակալութիւն յայտնեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանին, իր հայրական բարձր հովանաւորութեան համար:

Ընդհանրապէս խօսեց վարժարանի պետական տնօրեն՝ Մուհամմետ Հաֆեզին եւ Հալէպի պետական կրթական տնօրեն Իպրահիմ Մասոյին: Ընդհանրապէս յայտնեց Սուրիոյ Խորհրդարանին, որ միաձայնութեամբ ընդունեց եւ վաւերացուց Հայոց Յեղասպանութեան բանաձեւը եւ երախտագիտական խօսք ուղղեց սուրիական հայրենիքին եւ անոր վստահաշունչ անխազահ Տորք. Պաշտարալ Ասատին:

Հայերէն եւ արաբերէն հրաժեշտի խօսք եր արտասանեցին վարժարանի 12-րդ կարգէն շրջանաւարտներ:

Աւարտին, Առաջնորդի Օգնական Հոգ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի ձեռամբ վկայուեցան միջնակարգի եւ երկրորդականի շրջանաւարտները, որմէ ետք հայր սուրբը ներկաներուն ուղղեց իր սրտի խօսքը, փոխանցելով Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի ողջոյն-

ներն ու շնորհաւորութիւնները՝ վարժարանի հոգաբարձութեան, տնօրենութեան, ուսուցչական կազմին եւ շրջանաւարտ աշակերտներուն: Ան գնահատեց հանդէսի բովանդակալից յայտագիրը, Հայոց Հայրիկը բնութագրելով որպէս «մեր իրաւունքներուն պաշտպանը» եւ հրաւիրեց աշակերտները, որպէսզի իրենց կեանքին մէջ ըլլան պայքարող եւ տեր ու պաշտպան կանգնին մեր իրաւունքներուն:

Խօսքը ուղղելով ծնողներուն, հայր սուրբը ցորենի հասկերուն պատկերը մէջբերեց, աշակերտները նմանցնելով ցորենի լեցուն հասկերուն, որոնք իրենց ծնողներուն կողմէ իբրեւ հունտեր ուղղուեցան այս վարժարանը, ուր տնօրենութեան եւ ուսուցչական կազմին հոգատարութեամբ սնանեցան եւ Աստուծոյ նախախնամութեամբ աճելով դարձան մեծահասակ, լեցուն հասկեր, դիտել տալով որ այսօր, այս վկայականով, անոնք հրաւիրուած են մուտք գործելու համալսարան:

Հանդէսը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:

Հանդէսէն ետք, վարժարանի բակին մէջ տեղի ունեցաւ կարկանդակի հատում եւ աշակերտներուն յատուկ մտերմիկ խրախճանք:

ՆՐԱԺԵՇՏԻ...

Սկիզբ՝ էջ 6

Ֆահամը, որ թռչակի ելլելով ամբողջացուց իր կրթական ծառայութիւնը: Պարոն Ֆահամը այս առիթով իր ուրախութիւնը յայտնեց եւ շնորհակալական խօսք ուղղեց վարժարանի Հոգաբարձութեան, տնօրենութեան եւ ողջ անձնակազմին, որոնց հետ իրարայայջորդ տարիներ արդիւնաւետ աշխատանքային օրեր ապրեցաւ:

Աւարտին իր սրտի խօսքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ փոխանցելով իր հայրական օրհնութիւնները գնահատեց վարժարանի Հոգաբարձութիւնը, Տնօրենութիւնը, Ուսուցչական կազմը, Թեմիս Ուսումնական Խորհուրդը եւ ամբողջ պաշտօնէութիւնը այս յաջողութեան համար:

Սրբազան Հայրը ըսաւ. «Այս վկայականը կը կոչուի հաստատագիր, որ թէ՛ն վկայական չէ, սակայն հոսկէ կը սկսին յաջողութիւնները, երբ ուսանողը ունենայ տեսիլքը, կամեցողութիւնը, համբերութիւնը եւ ընտրելու կարողութիւնը: Այս բոլորին տիրն ծնողքը պէտք է ունենայ իր իւրայատուկ դերակատարութիւնը, որպէսզի իր գաւակը ունենայ ապահով եւ փայլուն ապագայ», ւաւեցնելով ըսաւ. «Նախակրթարանի այս հաստատութեան կարեւոր բեմէ: Դու է որ աշակերտը պիտի տեսնէ ապագան, մասնաւոր իր ծնողներու առաջնորդութեամբ»:

Սրբազան Հայրը կոչ ուղղեց աշակերտներուն, որ ուղղուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք, որ գոհողութիւններով եւ յաջողութիւններով լեցուն

ապահով դաշտ մըն է: Խրատեց, որ անոնք ուսումնէ եւ գիրքէ հեռու չմընան եւ ուսման ճամբով գանազան ասպարեզներու մէջ փայլուն դիրքերու հասնին:

Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորեց ծնողները, մաղթելով որ իրենց գաւակները ապագային տեր կանգնին մեր ազգային արժէքներուն եւ իրենց ներդրումը բերեն Սուրիական հայրենիքին, անոր Վսեմաշուք Նախագահին եւ բանակին: Մասիս Եպիսկոպոս իր ձայնը միացնելով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի կոչին՝ զօրակցութիւն յայտնեց Հայաստանի եւ Արցախի բանակներուն, մաղթելով որ շուտով խաղաղութիւն տիրէ Հայաստանի սահմանին վրայ:

Սրբազան Հայրը շրջանաւարտներուն երգած «Կիլիկիա» մաղթերգը ձօնեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ գահակալութեան 25-ամեակին, Նորին Սրբութեան մաղթելով արեւշատ տարիներ:

Հանդէսը փակուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

Աւարտին Դպրոցի շրջափակին մէջ տեղի ունեցաւ հրաժեշտի կարկանդակի հատում եւ կոկիկ հիւրասիրութիւն:

ԶԱՐԻՔԻՆ...

Սկիզբ՝ էջ 4

րութիւն պիտի պահես շուրջը գտնուող անձերէն, հանրակառքերուն մէջ նշուած եւ արտօնուած տեղերը կրնաս նստիլ (անշուշտ օրական քանի մը անգամ կը հակասեխուին ժողովրդային փոխադրամիջոցները), վերելակին մէջ միայն երկու անձերու ներկայութիւնը արտօնուած է. ճաշարանները, թատրոնի սրահները եւ խաղաղաշտերը փակ են: Վերջերս վարակին երկրորդ փուլին անցաւ երկիրը, այսինքն կարգ մը խանութներ, առեստուրի կեդրոններ, բացօթեայ ճաշարաններ, պարտէզներ, լողաւազաններ, մանկամտուրներ, ամառնային բացօթեայ կարգ մը դպրոցներ եւ եկեղեցիներ՝ որոշ փոփոխութիւններով եւ առողջապահական կանոնները պահպանելով բացուեցան, իսկ փակ տեղերուն մէջ բերանակապ կրելը պարտադիր եղաւ:

Անշուշտ, նախորդ ամիսներուն, արդիական միջոցներու վարժ զբոսորդները, համալսարանները, ինչպէս նաեւ երիտասարդները դժուարութիւն չկրեցին, միջին տարիքի անձինք համակարգիչի վերաբերեալ բաց թողած գիտելիքներ ձեռք բերին, որպէսզի հարագատներուն ու ընդհանրապէս մարդոց հետ կապ պահեն, առցանց աշխատին, ժողովներ գումարեն ու իրենց ժամերը լեցնեն: Դժուարութեան պարագաներու ենթակուցեցան ծերերը, որոնք արդիական միջոցներ օգտագործել չէին գիտեր, ինչպէս նաեւ հանգստեան տուններու մէջ ապրող տարեցներու պարագան դժուար էր այն առումով, որ տարիքի յառաջացումն ու կարգ մը հիւանդութիւն ունեցողները շուտ վարակուեցան

ու դժբախտաբար չկրցան դիմադրել հիւանդութեան եւ յանձնուեցան: Երկրորդ դժուարութիւնը երկրորդականի էր, այս պարագային հարագատներու այցելութիւնը խստիւ արգիլուած էր (վարակելու կամ վարակուելու վտանգը կանխելու նպատակով): Այս ամիս այդ հարցն ալ լուծուեցաւ ու որոշ սահմանափակումներով այցելութիւնները արտօնուեցան:

Որպէս հայկական գաղութ մեր եկեղեցիները, ակումբը, դպրոցը, մշակութային օճախները եւ հաստատութիւնները առցանց շարունակեցին իրենց գործունէութիւնը եւ առաքելութիւնը ու հասան կարիքաւորներու օգնութեան, ինչպէս նաեւ իրենց օժանդակութիւնը չխնայեցին հաւատացեալներէն եւ հայ գաղութի գաւակներէն:

Այս ճգնաժամին շատ մը առաջնահերթ եղող արժէքներ վերլիշեցինք ու կարեւոր համարեցինք բոլորս, ի վերջոյ չարիքին մէջը պահուած բարին նկատեցինք ու անոր կարեւորութիւնը վերլիշեցինք, օրինակ՝

- 1-Առողջութիւնը
- 2-Ընտանիքը
- 3-Կարեկցութիւնը
- 4-Մարդասիրութիւնը
- 5-Ազատութիւնը
- 6-Հոգատար ըլլալը
- 7-Կենսուրդի մաքրութիւնը

(մեծ գործարաններուն փակ մնալու շնորհիւ կենսուրդտն ու ծովերը ապականութեւն ձեռքբազատուեցան):

Կարծեմ, թէ «Քորոնա»էն առաջ ազատութեան քաղցրութիւնը անհամ դարձած, ընտանիքի անդամները մեկուսացած, ձեռնահեռաձայններու ովկիանին խորքը ընկնող մած, Աստուծոյ բարիքները գնահատել մոռցած եւ կարեկցութեան իմաստը կորսնցուցած կ'ապրեինք: Այս անխիղճ պսակածեւ ժահրը մեր տոնի ձգելէ ետք, արթուն խիղճով պիտի շնչենք Աստուծոյ՝ մեզի պարգեւած թթուածինը ու մեր սրտերուն մէջ թացած պիտի արժեւորենք մեր ունեցած հոգեկան գանձերը:

Հակառակ պատահած մահերուն, հիւանդութեան, տնտեսական ճգնաժամին, մարդոց մեկուսացման, հոգեկան դժուարին պարագաներուն եւ քառասային վիճակին՝ լաւատեսութեամբ կ'ուզեմ դիտել այս ամէնը ու մարդոց հոգւոյն աչքերուն բացուիլը կը խնդրեմ, որպէսզի բոլորս ալ մեր ու մեր շուրջիններուն հանդէպ աւելի ուշադիր եւ հոգատար ըլլանք, բարութեան եւ համբերանքի սերմերը մեր հոգիին մէջ ցանենք, որովհետեւ աշխարհը վտանգող Նոր եւ աւելի ծանր վարակներու ենթակուցելու գաղափարին մտահոգութիւնը սիրտս կը նեղէ:

Խնդրանքս է, որ բոլորս ալ առողջութեան թագը կրած մնանք ու համբերատարութեամբ գիտնուած շարունակեցնէք ապրիլ Աստուծոյ՝ մեզի պարգեւած կեանքը եւ շող մը տեսնելով քալենք դէպի լոյսը տաւոյ ապահով ճանապարհէն:

Կը մաղթեմ, որ այս ճգնաժամէն ետք, մեր տուններէն դուրս ելած պահուն, արժանաւանք կեանքի բերքառատ արտերուն բարի արգասիքը վայելելու:

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ
Արդիւնաւետ շաբաթ է: Կարելիութիւն պիտի ունենայ իրականացնելու նախապէս անիրականանալի թուող ձեռնարկները:



Ցուլ
Բարենպաստ շաբաթ է հետաքրքրական ճամբորդութեան համար: Ուսումնական կեանքի հետեւողները յաջողութիւն պիտի գտնեն այս շրջանին:



Երկուորեակ
Յանկալի է գոնէ մէկ-երկու բանի մէջ արմատական փոփոխութիւն մտնելու կեանքին համար երանգ պարգեւելու համար: Խուսափեցէք ապրելակերպի մէջ միօրինակութենէ:



Խեցգետին
Վերջ տուէք ձեր կասկածներուն եւ երբեք չափազանցուած մտահոգութեան: Ձեր ուշադրութիւնը կեդրոնացուցէք արդիւնաւետ գործերու եւ յարաբերութիւններու վրայ:



Առիւծ
Նիւթական դժուարութիւններ կըրնաք դիմագրաւել այս շաբաթ, սակայն պիտի չտագնապիք, որովհետեւ կը հասկնաք, որ անոնք ժամանակաւոր են: Այդուամենայնիւ տնտեսող եղէք:



Կոյս
Ձեր կարգ մը նախասիրութիւնները եկամուտի աղբիւրի պիտի վերածուին: Սա դրական անդրադարձ պիտի ունենայ ձեր կեանքին վրայ:



Կշիռք
Փորձեցէք խուսափիլ անելորդ յուզումներէն: Այնքան ատեն որ սառնասրտութեամբ կրնաք լուծել հարցերը, դուրս ճիշդ ճամբու վրայ կը գըտնուիք:



Կարիճ
Ձեր գործերը ակնկալուածէն անելի շատ պիտի ըլլան այս շաբաթ: Փորձեցէք կարգ ու կանոն պահպանել հաշուապահական աշխատանքներուն մէջ:



Աղեղնաւոր
Բարենպաստ շաբաթ է ընկերային յարաբերութիւնները գարգացնելու համար: Դրական ընթացք պիտի ունենան ձեր ե՛ւ գործնական, ե՛ւ անձնական հանդիպումները:



Այծեղջիւր
Սիրային ձեր կեանքը պիտի բարելաւուի, եթէ անելի համարձակօրէն արտայայտէք ձեր զգացումները եւ փորձէք ձեր սիրեկանին դրական կողմերը տեսնել:



Ջրհոս
Փորձեցէք խուսափիլ վեճերէն: Մի տարուիք այլոց ըստ-ըսանքով, որովհետեւ անոնք կրնան փճացնել ձեր յարաբերութիւնները:



Ձուկ
Կեանքը միայն աշխատանք ու պարտաւորութեանց լիով կատարում մի՛ համարէք: Վայելեցէք արձակուրդի օրերը եւ հոգ տարէք ձեր առողջութեան եւ ընկերային կեանքին:




ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՆԱԼ ԵՒ ԻՆՉՊԵՍ ԲՈՒԺՈՒԻԼ COVID-19-ԷՆ

Պակասած ժահրին պատճառով covid-19 համաճարակի սկիզբէն ի վեր, կարգ մը երկիրներ, ինչպէս Չինաստան, յաջողեցան մասամբ մը դանդաղեցնել անոր տարածումը, սակայն համաճարակին ամբողջական յաղթահարումը տակաւին հեռու է եւ կացութիւնը անկանխատեսելի կը մնայ: Զեւեւաբար մեր պարտականութիւնն է պաշտպանել մենք զմեզ ու մեր շրջապատը եւ ըլլալ պատասխանատու:

Պաշտպանուելու համար covid-19-ին դէմ, դիմեցէք հետեւեալ քայլերուն

1- Յաճախ լուրջ ձեռքերը օճառով կամ հականերխիչով

Ձեռքերը մաքուր պահելը շատ կարեւոր է, յատկապէս օճառն ու այլ լուրջ պարունակող հականերխիչները կրնան սպանել ձեռքին վրայ գտնուող ժահիրը:



2- Ձեր եւ ուրիշներուն միջեւ պահեցէք նուազագոյնը 1 մէթր հեռաւորութիւն

Երբ մարդ կը փռնուի, կը հագայ կամ նոյնիսկ երբ կը խօսի անոր բերնէն կրնան դուրս գալ լորձուքի կաթիլներ, որոնք կրնան վարակի պատճառ ըլլալ, մանաւանդ եթէ անհատին ֆիզիքապէս մօտ ենք, այդ կաթիլները կրնան հասնիլ մեզի:

3- Խուսափեցէք ձեր երեսին կամ աչքերուն դայելէն

Ժահիրը շատ արագ կրնայ փոխանցուիլ ապակաւուած ձեռքէն դէպի մեր դպած տեղը: Իսկ երբ ան կ'անցնի աչքին, քիթին կամ բերնին, մեծ դիւրութեամբ կրնայ նաեւ մուտք գործել ձեր մարմինը:

4- Ձեր եւ ձեր շրջապատի շնչառական գործարանները պաշտպանուած պահեցէք

Գործածեցէք ղնչակապ, իսկ երբ կը փռնուիք կամ կը հագայք, ձեր քիթն ու բերանը արմուկով ծածկեցէք: Թաշկինակ գործածելու պարագային անմիջապէս գայն թափեցէք գոց աղբամանի մէջ, ապա խնամքով լուացէք ձեր ձեռքերը: Այսպիսով դուք պաշտպանուած կ'ըլլաք ոչ միայն ձեր, այլ նաեւ ձեր շրջապատի շնչառական գործարանները:

5- Մնացէք տունը մինչեւ վերջնականապէս բուժուիք

Եթէ զգաք ախտանշանները, դիմեցէք ինքնամեկուսացման միջոցով: Խնդրեցէք հարազատ մը, որ կատարէ ձեր գնումները եւ դէմ տան դրան դիմաց, իսկ եթէ անհրաժեշտ է տունէն դուրս գալը, անպայման կրեցէք ղնչակապ: Ուրիշներուն հետ շփումներ խուսափելով առաջին հերթին դուք զանոնք կը պաշտպանէք վարակէն եւ կը դանդաղեցնէք անոր տարածումը:

6- Եթէ ախտանշանները սաստկանան, դիմեցէք բժշկական օգնութեան

Եթէ ձեր տաքութիւնը չթեթեւանայ, հազը շարունակուի վտանգաւոր ձեւով, կամ տառապիք ծայրայեղ շնչառութեան, անմիջապէս դիմեցէք բժշկական օգնութեան, ձեր բնակած վայրի իշխանութիւններուն սահմանած օրինաչափերուն հետեւելով: Ամէն բանէ առաջ հեռաձայնեցէք կառավարութեան տրամադրած հեռաձայնի շտապ թիւերուն: Զեռաձայնելով դուք առիթ կ'ընծայէք մասնագէտներուն յարմարագոյն ձեւով հետեւելու ձեր վիճակին եւ ձեզ տանելու ամենամօտ հիւանդանոցը: Այսպէս նաեւ օգնած կ'ըլլաք բուժաշխատողներուն եւ կը սահմանափակէք ժահրի տարածումը:

7- Ձեր տեղեկութիւնները քաղեցէք պաշտօնական աղբիւրներէ

Նախագոյն շաբաթներու բուժման շուրջ ստորոգ տեղեկութիւններ կրնաք ստանալ ձեր բնակած երկրի Առողջապահութեան նախարարութենէ կամ ՄԱԿ-ի Միջազգային Առողջապահութեան Կազմակերպութենէ: Զամացանցէն ձեր բոլոր կարգաւորումներուն մի՛ հաւատարմ եւ եղբ խոհեմ, զանազան տեղի ճիշդ տեղեկութիւնը սխալ լուրէն:

ԻՆՉ ԵՆ COVID-19 ԻՍԼԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՍՏԱՆՆԱՆԵՐԸ


Covid-19-ի ախտանշանները շատ կը նմանին սովորական կռիւի ախտանշաններուն, սակայն անելի ծայրայեղ կրնան ըլլալ: Զիմական ախտանշաններն են կոկորդի քերուղտուք ու չորութիւն, չոր հազ, բարձր տաքութիւն, շնչառութեան նեղութիւն եւ հոտառութեան զգայարանքի տկարացում, նոյնիսկ՝ ամբողջապէս անհետացում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԲՈՒԺԵԼ COVID-19-ը

Մինչեւ օրս Covid-19-ի յատուկ բուժում չկայ: Բժըշկական մեկուսացման կեդրոններէն ներս կը դիմեն հետեւեալ բուժումներուն՝

- 1- Կենսանիւթերու գործածութիւն, յատկապէս C եւ E կենսանիւթերու եւ *զիւք* մետաղի:
- 2- Առօրեայ ուտելիքին մէջ ներառել օրական մէկ հաւկիթ, նուազագոյնը 1,5 լիթր ջուր եւ բոլոր ուտելիքներն ու խմելիքները տաք ճաշակել:
- 3- 1000 միլ. կրամ սիթաժով դեղահատ առնել:
- 4- Առաւօտեան 10-11 նուազագոյնը 15-20 վայրկեան ենթարկուիլ արեւու շողերուն:
- 5- Սպառել թթու պտուղներ, կիտրոնային տեսակի կամ աւղբատո, մանկո, սխտոր եւ արքայախնձոր, որովհետեւ անոնց մէջ թթուն կ'օգնէ մարմինին դիմադրելու ժահիրը:

Վերջապէս, կը մաղթենք բոլորին առողջութիւն եւ ապահովութիւն: Լիայոյս ենք, որ համաճարակի այս ալիքն ալ կ'անցնի եւ շուտով կը վերագտնենք մեր բնականոն կեանքը:



Մարզական



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքէն

- Ուրբաթ երեկոյեան Դամասկոս ժամանեց Սուրիոյ հաւաքականի մարզիչ Նապիլ Մաալուլ: Նորանշանակ մարզիչը երկարատեւ ճամբորդութենէ



ետը Լիբանանի ցամաքային սահմանէն ժամանեց Դամասկոս՝ իր հետ ունենալով իր երկու օգնականները: Աւելցնենք, որ երեք ամիս առաջ Մաալուլ պայմանագրութիւն կնքած էր Սուրիոյ Ֆութպոլի Դաշնութեան հետ, բայց պայկածէ ժահրի համաճարակին պատճառով անոր Դամասկոս ժամանումը ուշացաւ:

- Սուրիոյ Մարզական Գերագոյն Կոմիտէն դադրեցուց Զալէպի Իթթիհատ ակումբի վարչութիւնը իր արձանագրած զանազան թերացումներուն պատճառով եւ անոր փոխարէն կազմեց առժամեայ եռանդամ կազմ մը՝ Նախագահութեամբ երկրաչափ Պասել Զամուիի:

ՀԱՅԿԱԿԱՆ

Վարդան Մինասեան Պիտի Զեռանայ «Արարատ-Արմենիա» Խումբէն

Երեւանի «Արարատ-Արմենիա» ակումբը եւ խումբի հայրենի մասնագետ մարզիչ Վարդան Մինասեան փոխադարձ համաձայնութեամբ չեն

երկարաձգած պայմանագրութեան ժամկետը: Այդ մասին յայտարարեց ակումբի պաշտօնական կայքէջը: Վարդան Մինասեան կը գլխաւորէր խումբը 2018-էն ի վեր: Արարատ-Արմենիան մարզիչին գլխաւորութեամբ մասնակցած է 69 մրցումի եւ արձանագրած է 41 յաղթանակ, 14 հաւասարութիւն եւ տղնքան պարտութիւն: Երկամեայ աշխատանքին ընթացքին, Վարդան Մինասեանի գլխաւորած կազմը երկու անգամ դարձած է Հայաստանի ախոյեան, մէկ անգամ սուփըր գաւաթակիր՝ հայկական ֆութպոլի պատմութեան մէջ առաջին անգամ դուրս եկած է Եւրոպա Լիկայի որակաւորման փլէյ-օֆֆ փուլ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Չաւին Պսակաձեւ Ժահրով վարակուած է



Սպանիոյ հաւաքականի եւ Պարսելոնայի նախկին խաղացող, Չաւի Զերնանտեզ, որ Ներկայիս կը մարզէ Զաթարի ալ Սաատ ակումբը, դիմատետրի իր էջին վրայ յայտարարեց, որ վարակուած է պսակաձեւ ժահրով: Ըստ Զաթարի ակումբի պատասխանատուներուն, Չաւին ինքզինք մեկուսացուցած է եւ ներկա-

յիս ան լաւ վիճակի մէջ է, բայց որոշ շրջան մը հեռու պիտի մնայ խումբի մրցումներէ:

Ունայ Էմերին Ստանձնեց Վիլա Ռեալի Մարզիչի Պաշտօնը

Սպանիոյ Վիլա Ռեալ ակումբի վարչակազմը պաշտօնապէս յայտարարեց, որ յառաջիկայ տարեշրջանին խումբի մարզիչի պաշտօնը վստահուած է սպանացի մասնագետ Ունայ Էմերին: Ըստ աղբիւրին, ակումբը Էմերին հետ ստորագրած է երեք տարուան պայմանագրութիւն՝ առանց անդրադառնալու նիւթական պայմաններուն: Աւելցնենք, որ սպանացի մարզիչը վերջերս կը մարզէր Անգլիոյ Արսենալը, որմէ հեռացաւ 2019-ին: Նախապէս ան մարզած է Նաեւ Սելիլիան, Վալենսիան եւ Ռուսիոյ Սպարտակը: Վերջին տարեշրջանին Վիլա Ռեալը գրաւեց Սպանիոյ ախոյեանութեան 5-րդ հորիզոնականը եւ ստացաւ Եւրոպայի ախոյեանութեան մասնակցելու իրաւունք:



Շթենկէն Պահանջուած է Չելսի Խումբէն

Անգլիական Mundo Deportivo-ն գրեց որ Սպանիոյ քաթալոնեական Պարսելոնայի բերդապահ Շթենկէնը պահանջուած է Անգլիոյ Չելսի Խումբէն:




Սպանական ակումբը ներկայիս կը մերժէ բոլոր ակումբներուն առաջարկները եւ մտադիր է յառաջիկայ օրերուն իր պայմանագրութիւն մը ստորագրել իռլանտացի դարպասապահին հետ: Աւելցնենք, որ Չելսի Պարսելոնային առաջարկած է իր դարպասապահը՝ Զեպա Արիգա-

պալական, ինչպէս նաեւ յաւելեալ նիւթական, բայց այս առաջարկը մերժուած է քաթալոնեացիներուն կողմէ:

Թիւ 18

Աարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է ♖b5#

ՀՍԸՄ-ի ձատրակի Յնձիւ.

Երկուշաբթի 3/8	Երեքշաբթի 4/8	Չորեքշաբթի 5/8	Հինգշաբթի 6/8	Ուրբաթ 7/8	Շաբաթ 8/8	Կիրակի 9/8
24° 38°	24° 37°	24° 36°	24° 37°	24° 38°	24° 38°	24° 37°

«ԱՆՈՒՂԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ» ԵՒ ՔԱՅԼ ՄԸ ԴԵՊՅԻ ՀԱՐԻՐԱՄԵՆԱԿ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ Համագայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Երաժշտական Յանձնախումբին, Հինգշաբթի, 23, Շաբաթ, 25 եւ Կիրակի, 26 Յուլիս 2020-ին, տեղի ունեցաւ «Աշուղական Երեկոյ»-ն, գեղարուեստական ղեկավարութեամբ բժշկ. Ռաֆֆի Ապեճեանի:

Հալէպահայ հանդիսատեսը ծարաւ էր այսպիսի համերգի մը՝ պակաս ծախսերով համաճարակին ստեղծած պայմաններուն լոյսին տակ երկարատեւ ի վեր գրկուած ըլլալով հանրային մշակութային ձեռնարկ:



Հայերէն բացման խօսքով Ժեւի Նաճարեան ըսաւ. «Այս տարի Համագայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղը կը յիշատակէ իր հիմնադրութեան 90-ամեակը: Ամբողջ 90 տարի անդուլ աշխատող, հայ մշակոյթի պահպանումը իր գործունէութեան հիմնական առանցքը նկատող «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղը դէպի 100-ամեակ իր երթին մէջ կը մնայ յանձնառու, եւ պատասխանատու աշխատանքով կը շարունակէ իր առաքելութիւնը»:

Արաբերէն բացման խօսքով Սերի Ապաճեան ըսաւ. «Այսօրուան համերգը անգամ մը եւս կը հաստատէ այն իրողութիւնը, որ մենք՝ երիտասարդներս, կը շարունակենք հետեւիլ մեր նախնիներուն բացած ճամբուն եւ պահպանել այն հսկայ ժառանգութիւնը, որ դրուած է մեր ուսերուն»:

Համերգին կը մասնակցէին 17 նուագողներ, 5 երգիչներ՝ Լիւսի Յովհաննէսեան, Մարինէ Մարգարեան, Կասիա Պաղտիկեան, Խաչիկ Աշճեան, բժշկ. Պերճ Գասապեան, ինչպէս նաեւ Համագայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի «Սարդարապատ» պարախումբը, գեղարուեստական ղեկավարութեամբ Վրէժ Թերզեանի:

Համերգը կ'ընդգրկէր Սայաթ Նովայի, Աշուղ Ջիւանիի եւ Գուսան Շերամի գլուխ գործոցները, ինչպէս՝ «Թամամ Աշխարհ», «Ձէնդ Զաղցր Ունիս», «Ախ Իմ Հայրենիքս Ձուրը», «Նա Մի Նագ Ունի» եւ «Շորորա»:

Բեմահարթակի աշուղական արուեստի յարիւր յարգարանքը, հայկական երաժշտական գործիքները, երգող-նուագողներուն հայկական շքեղ տարագները գուսանական աշխարհի գունեղ պատկեր մը ստեղծած էին:

Համերգը սկսաւ «Գողթան» երաժշտութեամբ, ապա «Աշուղ Ե Եկել» խմբերգով:

Օրուան բեմավարներ՝ Ժեւի Նաճարեան, Մեղրիկ Մուշոյեան եւ Սերի Ապաճեան, մերթ ընդ մերթ ներկայացուցին աշուղներու կենսագրական տուեալները, անոնց գործերն ու խօսքերը:

Ուրախալի փաստ էր, որ երգիչներուն ու նուագողներուն մեծամասնութիւնը Համագայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Երաժշտական Յանձնախումբի անդամներն էին՝ երիտասարդ, տաղանդաւոր համագայնականներու ընտրանի մը կազմած:

Համերգի վերջին երգն էր Աշուղ

Ջիւանիի «Խելքի Աշեցեք» կատակերգը, որմէ համար մը երգելով հանդէս եկան քանի մը երգողներ՝ բժիշկ Ռաֆֆի Ապեճեան, բժիշկ Պերճ Գասապեան, Յակոբ Ուրիշիկեանը, Միհրան Աշակերտեանը, Խաչիկ Աշճեան, Ճորճ Պերպերեան եւ Ժագ Պօզեքալեան՝ ուրախ տրամադրութեամբ լրումին հասցնելով աշուղական համերգը:

Յայտագիրին երգերն ու երաժշտական մշակումները կատարողական նկատառելի որակի մը արգասիքն էին: Սայաթ Նովայի «Մեճիխ»-ին բեմականացումը ջերմ երանգ մը տուած էր համերգին: «Մեճիխ»-ին մաս կազմող երգողները մերթ ուրախութեան բացագանչութիւններով, մերթ երգերուն մաս կազմելով հանդիսատեսին ուշադրութիւնը կեդրոնացուցած պահեցին ողջ համերգին ընթացքին:

Համագայինի «Սարդարապատ» պարախումբը եւ ժողովրդական, եւ՛ աւրիական պարերով հարստացուց համերգը: Մէկ խօսքով՝ մեր տղաքն ու աղջիկները ամբողջական «Մեճիխ»-ի մը բոլոր տուեալները ստեղծած էին:

Վարչութեան խօսքը արտասանեց Հ. Նիկոլ Աղբալեան՝ Մասնաճիւղի Վարչութեան ատենապետուհի Ռոզէթ Ապաճեան: Ան դիմելով համերգին մասնակցող երիտասարդներուն ըսաւ. «Հալէպը եղած է Մայր գաղութ եւ պիտի գոյատեւէ որպէս Մայր գաղութ, այնքան ատեն որ ունի ձեզի նման մշակութասէր սերունդ»:

Ապա համերգի գեղ. ղեկավար բժիշկ Ռաֆֆի Ապեճեան գնահատուեցաւ «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութեան կողմէ՝ իր տարած բժախնդիր աշխատանքին համար: Պարգեւը յանձնեց Համագայինի Շրջ. Վարչութեան ատենապետ

ԱՃՊԱՅԻՆ ՔԱՐԷ... Սկիզբ՝ 1ջ 1

սանելով ըսաւ, որ ԱԶԵ ճեմարանը Սուրիոյ եւ յատկապէս Հալէպի մէջ տարիներու ընթացքին եղած է ու պիտի ըլլայ մարդն ու ազնիւ քաղաքացին կերտող հզօր այն կառուցող, ուր կը տիրէ կարգ ու կանոն: Աւելին՝ ճեմարանը կազմակերպուած աշխատանքի օրինակելի հաստատութիւն մըն է, որ իր աշակերտներուն ուսումնական եւ բազում առաւելութիւնները յայտնաբերելով՝ կ'ուրուագծէ անոնց ապագան:

Ապա խօսք առաւ վարժարանիս տնօրէն Յակոբ Զիլճեան, որ կարելորեց ճեմարանի դերը սփիւռքահայ կեանքին մէջ, ապա ներկայացուց այս տարեշրջանի ամփոփ տեղեկագիրը:

Տնօրէնը շնորհակալութիւն յայտնեց հանդէսի կազմակերպիչներուն, մասնաւորաբար հայերէնաւանդ ուսուցչուհի Մարիա Գաբրիելեանին, արաբերէնի ուսուցիչ Արա Մուրաֆեանին եւ երգչախումբի ղեկավար, ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ Ռուզան Պարսումեանին, Բերիոյ Թեմի «Դպրոց» հիմ-

թին բարձրագոյն նիշ ապահոված իւրաքանչիւր շրջանաւարտի նուիրած է «Կիլիկիա» իրատարակչատան գիրքերէն 30 օրինակ:

Ապա տեղի ունեցաւ նախորդ տարուան երկրորդականի պետական քննութեան արդիւնքով առաջնակարգ հանդիսացած աշակերտներու պարգեւատրումը Շրջանաւարտից Միութեան կողմէ՝ ձեռամբ տնօրէնին եւ Շրջ. Միութեան Վարչութեան անդամներ՝ Շահէ Տեր Արթիւնեանի եւ Մայտա Աւագեանի, հետեւեալ ձեւով. -

- Գիտական բաժին**
- 1-Մէրի Տըրմէշ
 - 2-Էլէնա Աւագեան
 - 3-Կիթառ Աւընեան
- Գրական բաժին**
- 1-Նանար Արթիւնեան
 - 2-Անժելա Զարկոճեան
 - 3-Առաքել Թերզեան
- ճեմարանի տնօրէնին եւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի օգնական Հոգ. Տեր Մանուկ Աբը. Պարիխանեանի ձեռամբ տեղի ունեցաւ վկայականաց բաշխում: Ապա հոգեշնորհ հայր սուրբը իր եզրափակիչ պատգամը ուղղեց՝ վեր առնելով բազում դժուարութիւններ դիմագրաւող այս սերունդին դիմադրողական ոգին, յատկապէս ԱԶԵ



Նադրամին, ԱԶԵ ճեմարանի Զալիֆորնիոյ Ընկերակցութեան, Համագայինի Շրջանային Վարչութեան, Բերիոյ Թեմի Նպաստից Յանձնախումբին, Եօժենի Պետրոսեան պարգեւին եւ անհատ բարերարներուն, որոնք բարոյապէս եւ նիւթապէս գօրազարդ կանգնեցան ճեմարանին: Տնօրէնը յայտնեց նաեւ, որ այս առիթով «Սկրտիչ Սկըրտիչեան» մրցանակի անուան տակ, տիար Մաթիկ Էպիլոյթեան հայերէն լեզուի եւ գրականութեան նի-

ճեմարանի դերը մարդակերտումի եւ հայակերտումի մէջ, որ շարունակուեցաւ Նոյնիսկ պատերազմի դժուար տարիներուն:

Ճեմարանին շրջանաւարտ դարձան 39 խոստմանայից երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք իրաժեշտ տալով իրենց դպրոցին, խոստացան բարձրագոյն ուսման հետեւելով մէկտեղ ծառայել իրենց վարժարանին՝ մաս կազմելով Ազգ. Զարէն Եփիմէ ճեմարանի Շրջանաւարտից Միութեան:

Պերճ Պօղիկեանը, իսկ համերգին վերջին օրը մասնակցից երաժիշտներն ու մենեքողները գնահատագիրներով պարգեւատրուեցան մասնաճիւղի վարչութեան կողմէ: Գնահատագիրները յանձնեց Համագայինի Շրջ. Վարչութեան անդամ Շանթ Ուրիշիկեան:

Աւարտին սրբազան հօր կողմէ սրտի խօսք արտասանեց Հոգեշնորհ Հայր Մանուկ Աբեղայ Պարիխանեան, որ ներկաներուն ուղղելով իր խօսքը ըսաւ. «Հայ մշակոյթի ոգին

կը սերմանուի Համագայինի մէջ, ուստի ձեր գաւակները անդամագրեցեք Համագայինին, որպէսզի իրենց մէջ սերմանուի հայ մշակոյթին սէրը, հայապահպանման ոգին ու անոնցմով հարստանայ մեր երիտասարդ սերունդներուն ներաշխարհը»:

Համերգը վերջ գտաւ հանդիսատեսներուն յոտնկայս ծափահարութեամբ եւ հայր սուրբին «Պահպանիչ» աղօթքով:

Վեհան Պարսումեան